



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳԻՐ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

I ՄԱՐՏ 1910

ԹԻԻ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարենոր ազդ

Ծրագրի ընդլայնում

Կանոնի ժողովրդի Անկիւրիոյ

Ժողովրդական ֆարգներ.— Գնացե՛ք այսուհետեւ

Հայ Եկեղեցւոյ մարտիրոսագրութիւնը

Մոռցում եղեր. — ՔԱՀ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆ-

ԵԱՆԻ ՄԱՀԸ (Բերքում)

Կրօնական եւ քաղաքական յիշքը Հա-
յուն համար

Ազգային կեանքը

Մանկ Արձագանգ

Ս. Սահակ Պարբեւ կամ Արշակունեաց քաղաւորու-
թեան քարձումը

ԽՄԲ. ԵՒ ՎԱՐՁ. ՄԱՐՄԻՆՔ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Ե. Ե. Դ.

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԳԱՄԱՌ ՔԱԹՈՍ

ԲՐՕՑ. ՅԱԿՈԲՈՍ ԶԷՃԻԶԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

. . . .

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Գին 50 փարայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զագմագճիւր, Յակոբեան կամ, Կ. Պոլիս



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ՄԱՐՏ 1910

ԹԻԻ 7

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Պատրիարքական փոխանորդ Դեր. Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան իր ծանրածանր զբաղմանց պատճառով միջոց չունենալով յանձնանելու կրօնաքերքիս վարչական գործերը, եւ միւս կողմէ խմբագրապետ Դեր. Տ. Գարեգին Վ. Խայասուրեան՝ Ազգ. Պատրիարքարանի որոշմամբ՝ ի մօտոյ մեկնելու վրայ ըլլալով Արմաշ, Դպրեվանոց ներքին տեսչութիւնն ստանձնելու, «Տաճար»ի խմբագրական եւ վարչական Մարմինները պարտք կը համարին ջերմ շնորհակալութիւն յայտնելու նոյն Դեր. Ս. Հարց՝ իրենց տարած խնամոց եւ հոգածութեան համար, որով երկար ժամանակէ ի վեր քաղաքացուած կրօնաքերքի մը հիմնարկութեան եւ կազմակերպութեան գործն ի գլուխ հանեցին:

Ներկայ թիւէն սկսեալ կրօնաքերքիս թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերը՝ յիազօր իրաւասութեամբ՝ յանձնուած են գրական հրապարակին վրայ իր ժողովրդական հրատարակութիւններով քաջածանօթ Արժ. Տ. Զարմայր Բահանայ Կեզիւրեանի, որ իբրեւ Տնօրէն-Խմբագիր պիտի վարէ սոյն թերթը՝ ժողովրդեան հոգեւոր, խմացական եւ քառոյսական կեանքին ու պէտքերուն հետզհետէ աւելի եւս համապատասխան վիճակի մէջ դնելով զայն, եւ իրեն խորհրդակից ունենալով միշտ խմբագրական եւ վարչական Մարմինները, որոնց համարատու է նիւթական մասակարարութեան եւ խմբագրական ուղղութեան կրկնակ տեսակէտներով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ
„ՏԱՃԱՐ“ ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍԵԱՅԷՆ ԵՏՔԸ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Տաճարի խմբագրական և վարչական Պատ. Մարմնոց կողմէ մեզ յանձնուած պատուարներ պաշտօնը կը ստանձնենք, կատարեալ գիտակցութեամբ անոր պարտագրած մեծ պատասխանատուութեան:

Ազատութեան հռչակման առաջին օրերէն ի վեր մեր իղձն էր հրատարակուած տեսնել կրօնական թերթ մը, արծարծելու համար ժողովուրդին սրտին մէջ կրօնասիրութեան հուրը որ աղօտանալ սկսած էր արդէն երկար ժամանակներէ ի վեր, բազմադիմի պատճառներով, և զոր բոլորովին մարելու ջանքեր երեցան դժբախտաբար վերջին մէկ երկու տարիներու մէջ կարգ մը միամիտներու կողմէ, որ մարդոց սրտին մէջէն հաւաքի, Յոյսի և Սիրոյ յաւիտենական Աղբիւրը ցամքեցնել աշխատելով կը կարծեն ծառայութիւն մատուցած ըլլալ:

Նիւթական միջոցներու չգոյութիւնը և գործին հիմնարկութեան նախնական բազմադիմի ծախքերը արգելք կ'ըլլային մեզ՝ նախաձեռնարկ ըլլալու այսպիսի կարևոր հրատարակութեան մը, որուն՝ իրենց հմուտութեամբ և արդարապէս վաստկուած համբաւով մը քաջածանօթ Միտքեր չափի գլխաւոր իրենց աջակցութիւնը:

Հիմայ որ գործն սկսուած է, և ըստ ամենայնի նպատաւոր պայման-

ներու մէջ կը յանձնուի մեզ, սիրով կը ստանձնենք զայն, քաջալերուելով այն համակիր ընդունելութենէն զոր ժողովուրդն առաջին քայլին իսկ ցոյց տուաւ Տաճարին, և սրտապնդուելով Ամեն Ս. Պատրիարք Հօր օրհնածիր խրախուսանքներէն, նաև այն խոստումէն զոր Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան հաճած է ընել մեզ, թէ միշտ աջակից և զօրավիգ պիտի գտնուի Տաճարին՝ նիւթապէս և բարոյապէս: Ասկէ զատ Գեր. Տ. Դարեգին Վ. Խաչատուրեան և Դպրեվանքի ուրիշ գրագէտ վարդապետները, ի մէջ այլոց Գաղատիոյ բարեջան առաջնորդ Գեր. Տ. Բարգէն Ծ. Վ. Կիւլէսէրեան — որուն հրատարակած Լոյս կրօնաթերթի երկամեայ հաւաքածոն գեղեցիկ տիպար մը կը մնայ լուրջ և ժողովրդական կրօնաթերթի, — և ուրիշ հմուտ եկեղեցականներ և աշխարհականներ խոստացած են մեզ իրենց պատուաբեր և օգտաշատ աշխատակցութիւնը:

Տաճարը, ուրեմն, առաջին եւ դամեալի մը յաջող — թէև առ խարխափ — փորձէն ետքը, այս Դրդ թիւով կը ներկայանայ ժողովուրդին, լաւագոյն յոյսերով:

Աւերորդ կը համարինք շեշտել կրօնաթերթի մը կատարելիք դերին կարեւորութիւնը: Ատիկա կը թողունք լաւագոյն կերպով բացատրել Բրոֆ.

Յակոբոս ձէճիղեանի, իր հոյակապ մէկ յօդուածով, զոր մասնաւոր հաճոյքով մը կ'արտասուէր Ամերիկայի Կոյնակէն, իբրեւ յառաջաբան մը այն աշխատակցութեան զոր մեծանուն Բըրօֆէսէօրը պիտի հաճի ընծայել հայ Տաճարին, որուն կրնանք ըսել թէ մէկ զաւակն է ինք ալ, և եռանդուն փափաքող մըն է անոր փառաւորութեանը:

Այս աշխատակցութիւնը առիթ կուտայ մեզ մանրամասնել քիչ մը այն ծրագիրը որուն կ'ուզէ հետեւիլ կրօնաթերթս: Տաճարը՝ Հայ Եկեղեցւոյ տրուած քահանայի մը Տնօրէն-Խմբագրութեան տակ հրատարակուած՝ բնական է թէ ամրապինդ փարած պիտի մնայ Հայաստանեայց Առաքելական ուղղափառ Ս. Եկեղեցւոյ հիմնական վարդապետութեանց և դաւանութեանց. բայց այն լայնամիտ ոգիով որ այս բազմաչափ Եկեղեցիին բնորոշ նկարագիրն է եղած, իր էջերը բաց պիտի պահէ ամէն կարգի Հայ զաւակներու առջև որ անցեալի խաւար ժամանակներուն մէջ, արդարացի կամ անարդար պատճառներով, — լաւ ևս օտարներու ռաբրած խոշոր թիւրիմացութեանց հետեւանօք — հեռացեր են անկէ, բայց միշտ վառ կը մնայ իրենց սէրը մայրենի Տան հանդէպ:

Միտով պիտի հիւրընկալուին, ուրիշ, Հայ-Բողոքական և Հայ-Հռոմէական զարգացեալ և կրօնասէր Միտքերու այն արտադրութիւնները, որոնք ծիսական և փիճաբանական նիւթերէ բոլորովին հեռու, և անոնցմէ շատ վեր, նպատակ ունին Քրիստոսի Աւետարանին վեճմ սկզբունքներու տարածումը ժողովուրդի ամէն խա-

ւերուն մէջ, և ասով իսկ կ'ըլլան միութեան, համերաշխութեան, կատարեալ եղբայրակցութեան կապ մը ազգին անջատ երեք հատուածներուն միջեւ:

Միութեան և եղբայրակցութեան նոյն անկեղծ ոգիով տոգորուն, Տաճարի Խմբագրութեան իտէալը պիտի ըլլայ՝ համերաշխութեան միջոց մը դառնալ ինչպէս ազգին տարբեր դաւանութեանց պատկանող երեք անջատ հատուածներուն, նոյնպէս տարբեր ուղղութեամբ և գործելակերպերով միեւնոյն նպատակին՝ այն է հայ ժողովուրդին բարոյական, իմացական և տնտեսական բարգաւաճումին և ինքնուրոյն գոյութեան հետապնդող այլևայլ Մարմիններու և Կուսակցութիւններու միջեւ, որոնց միասիրտ, համերաշխ գործունէութենէն մեծամեծ օգուտներ կրնայ քաղել այս տառապեալ ազգն ու Եկեղեցին:

Տաճարը, միւս կողմէ, ինչպէս ներկայ թիւին պարունակութենէն ուրոշ կ'երևայ, նպատակ ունի հնար եղածին չափ ժողովրդական ըլլալ, ինչպէս է դերազանցօրէն Հայ Եկեղեցին և Եկեղեցականութիւնը: Պիտի ջանայ ժողովուրդին հասկնալի լեզուով մը խօսիլ անոր հետ, ժողովուրդը շահագրգռող նիւթերու վրայ, լուսաբանել անոր հոգեւոր, իմացական ու բարոյական կեանքը բարձրացնող ու զարգացնող խնդիրներ, միշտ ջանալով անշուշտ կրօնական, ազգային ու գրական լուրջ Հանդէսի մը սահմանին մէջ մնալ, և զգուշանալով վիճաբանական ուղղութենէ մը:

Այսպէս, Տաճարը իր կրօնական բաժնին մէջ պիտի ջանայ օգտուիլ ամէն առիթներէ — Տէրունական, ազ-

գային և սուրբերու տօներ — ժողովուրդին մէջ տարածելու համար Աւետարանի ոգին, բացատրելու Հայ. Եկեղեցւոյ վարդապետութիւնները, և ծանօթացնելու անոր արիւնաներկ Պատմութեան սրտայոյզ դրուագները, մեր երանելի Նախնեաց մեծ դէմքերը և անոնց հոյակապ գործերը, որ այսօր, աւա՛ղ, կարծուածէն շատ աւելի անծանօթ մնացած են ո՛չ միայն ժողովուրդի մութ խաւերուն մէջ, այլ և ամէնէն աւելի զարգացած, և ինքզինքնին ինքեղիզէն հռչակող ու ժողովուրդէն առաջնորդելու գերն ըստանձնող դասակարգերուն մէջ։ Այդ կրօնական բաժնին մէջ մասնաւոր տեղ մը պիտի տրուի նաև օտար նշանաւոր հին ու նոր գիտնական և իմաստասէր Միտքերու ժողովրդային գրուածներուն, որով անոնք՝ տիեզերական գիտակից Զօրութեան մը, գերագոյն Արարչի մը գոյութիւնը կը հաստատեն վճռական փաստերով, ճիշտ այն ապացոյցներով որոնք սկեպտիկներու ձեռքը փաստակար գործիք մ'եղած են, ջնջելու ինչ որ կայ գեղեցիկ, բարձր ու նուիրական մարդկային սրտին ու հոգիին մէջ։

Բայց, կրօնական բաժնին հետ մէկտեղ, ինչպէս քիչ վերն ակնարկուեցաւ, Տաճար պիտի ունենայ ազգային և գրական բաժիններ ալ, այն նկատողութիւնով որ Հայուն կրօնական կեանքն և ազգային կեանքն անբաժանելի միութիւն մը կազմած են միշտ, և մեր երանաշնորհ Նախնիք, Հայ. Եկեղեցւոյ Ս. Հայրերը, եղած են միեւնոյն ատեն գերազանցօրէն գրական մարդիկ, որ ոսկեդարու ոսկեղինիկ լեզուով Աստուածաշունչը տուին մեզ, գիրքերու Դիրքը, գրա-

կանութեան ամէնէն հոյակապ կոթողը որ կանգնուած է աշխարհի մէջ։ Միեւնոյն ատեն անոնք, մեր անձնուէր Նախնիքները, Ասիացի Հայուն տուին հելլէն դպրութեան նուրբ ճաշակը, և անոր հոյակապ արտադրութիւնները ծանօթացուցին հայ ժողովուրդին։

Ազգային բաժնին մէջ պիտի խօսուի անցնող տասնըհինգ օրերուն կարեւոր դէպքերուն վրայ, ի հարկին յայտնուելով ամփոփ տեսութիւններ, և կարճ հայեացքներ ներուելով օրուան շահագրգռական հարցերուն վրայ։

Իսկ գրական բաժնին մէջ, առաւելակշիռ տեղ մը տրուելով հանդերձ հայ մաքի հին ու նոր լաւագոյն արտադրութեանց և գրական քննադատութեանց, օտար գրականութիւններն ալ պիտի ունենան իրենց թարգմանը այս սիւնակներուն մէջ, քանի որ ամէնէն աւելի քաղաքակրթուած ու ճիւղ գրականութիւնով օժտուած ազգերու մէջ իսկ անհրաժեշտ պէտք կը զգացուի ծանօթանալու օտար Մաքի հոյակապ արտադրութիւններուն, ա՛լ ո՛ւր կը մնայ հայ խեղճ ազգին աւելի քան աղքատիկ գրականութիւնը։

Աւելորդ է ըսել թէ այդ երեք բաժիններն ալ ժողովուրդին դիւրահասկնալի լեզուով մը խմբագրելու հոգ տանելով հանդերձ, պիտի զգուշանանք ուսուկոռքեան մէջ իյնալէ, և պիտի ջանանք մշակել ամենաբարձր նիւթերը, համոզուած ըլլալով որ ամէնէն վսեմ գաղափարները կարելի է — գոնէ անհնար չէ — բացատրել ամէնէն պարզ ու սահուն ոճով մը, բաւական է որ քիչ մը ճիգ ընէ գրողը, և գրութեան մը իմաստին թափանցելու համար ճիգ ընելու հոգը

չթողլուի ընթերցողին: Միւս կողմէ հաւատարիմ առաջին օրէն գծուած ծրագրին, պատուոյ տեղ մը կը վերապահուի միշտ պատմական-բանասիրական քննադատական ուսումնասիրութիւններու, որոնց կարեւորութիւնն և օգտակարութիւնը ժխտել գործ չէ ուշիմ մտքի:

Հուսկ ուրեմն Միջազգային Արձագանգի բաժինի մը մէջ տեղեկութիւններ պիտի ամփոփուին տեղական և արտասահմանի հայ և օտար թերթերու մէջ Հայութիւնը շահագրգռող կարեւոր յօդուածներու և իրողութիւններու վրայ:


Վերջապէս Տաճարի ծրագիրը պիտի աշխատուի իրագործել այնպիսի ձեւով մը, որ ընթերցողը ոչ թէ իբրեւ պարտականութիւն, այլ իբրեւ իմացական վայելք մը, փափաքի թըղթատել և ծայրէ ի ծայր հաճոյքով կարգաւ զայն, իմացական մարտը զբօսանք մը և հոգեկան անհրաժեշտ պէտքի մը գոհացումը գտնելով անոր մէջ:

Ծրագիրը որքան փայլուն, զայն

իրագործելու համար մեր համեստ կարողութիւնը նոյնքան անբաւական է. բացայայտօրէն կը զգանք ասիկա: Եւ սակայն վստահ ենք թէ պիտի յաջողինք, որովհետեւ հաւատք ունինք ստանձնուած գործին կարեւորութեան և օգտակարութեան վրայ, և մեզի օժանդակ ունինք բարի կամեցողութիւններ թէ՛ գրականապէս և թէ՛ գրականապէս սատարելու այս նուիրական ձեռնարկին:

Կոչում կ'ընենք ուրեմն բոլոր անոնց որ անկեղծօրէն կը փափաքին վերստին տեսնել Հայուն Տաճարն իր նախկին փայլին ու շքեղութեան մէջ: Թո՛ղ գան հաւաքուին հոն, այդ Տաճարին մէջ, միասին աշխատելու համար անոր վերաշինութեան, ու միասին փառաբանելու համար տիեզերքի Արարիչը, ան որ տէրն է բոլոր Տաճարներուն, և որուն փառքը կ'երգեն անթիւ, անհամար երկրպագուներն անսահման Տաճարին որ տիեզերքն իսկ է:

ԶԱՅՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷԶԻՐԵԱՆ



Ե Կ Ե Ղ Ե Ց Ա - Ի Ր Ա Ի Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՆԿԻՐԻՈՅ

(ԹԱՄԻՆ 314)

13. — Քորեպիսկոպոսի չէ՛ օրէն երի-
ցունս կամ սարկաւագունս ձեռնադրել^(*)
(χειροτονεῖν) և ո՛չ երիցունս ի քաղաքի ու-
րեք՝ առանց համարձակելոյ թղթովք ե-
պիսկոպոսին յըրախանջիւր իշխանութեան^(**)

14. — Որք ուխտի իցեն երիցունք կամ
սարկաւագունք հրաժարեալք ի մտոյ, կա՛մ
եղեւ զի ճաշակեցեն (յազապի)^(***) և
ապա՝ եթէ կամիցին՝ պահիցեն դարձեալ.
ապա թէ պիղծ համարեցին և չուտիցեն
ի բանջարոյ որ ընդ միս եփեալ իցէ և
չհաղանդեցին կանոնիս, դադարեցին
այնպիսիքն ի կարգէ:

15. Վասն ստացուածոց՝ որ եկեղեցւոյ
են և զոր վաճառեցին երիցունք ի բացա-
կայութեան եպիսկոպոսին, իրաւունք են
եկեղեցւոյն, պահանջել յետս զնոյն (զկալ-
ուածն եկեղեցւոյ). այլ եպիսկոպոսին անկ
է ընտրել՝ եթէ իցէ՞ պարտ առնուլ զգինսն
կամ դարձուցանել բազում այն է զի հասք
վաճառելոյ իրին առաւել չա՛հ ինչ օգտի
մատուցանեն քան զգինսն:

16. — Վասն այնոցիկ՝ որ ընդ անա-

(*) Հայ. Թարգմ. օծանել. — Սարկա-
ւագի ձեռնադրութեան մասին ևս «օծում»
բառը գործածած է թարգմանիչը 10րդ կա-
նոնին մէջ:

(**) Այս կանոնին մէջ Հայ Թարգմա-
նիչը բացատրած է իր կողմէն թէ ի՞նչ կը
նշանակէ քորեպիսկոպոս բառը:

(***) Յազապի բառն յաւելուած մ'է
բացատրութեան, զոր բրած է Զոնարոս
յոյն պատմիչը († 1130) իր Կանոնագրոց
նշանաւոր մեկնութեանը մէջ, և Հէֆէլէ
ընդունած է սնոր կարծիքը:

սունս պղծեցան, մեղուցեալք՝ չե ևս քսա-
նամենիք լեալ, հնգետառան ամս ընդ ուն-
կընդիրս կացեն, հաւասարելով աղօթից
և եթ և ապա կացեն ամս հինգ ի հաղոր-
դութեան^(*) (κοινωνία) և յայնժամ մերձե-
ցին յօրէնս. քննեցին և վարք նոցա
յունկնդրութեանն և այնպէս մարդասի-
րութեան հանդիպեցին: Իսկ եթէ ոմանք
յայն մեզս յամեալք իցեն՝ յաւելցի ապաշ-
խարութիւն ունկնդրութեանն: Եթէ կա-
տարեալք իցեն հասակաւ (այսինքն ի քը-
սանամենից և ի վեր) և կանայս ունելով
զառածեցին ի մեղան, քսան և հինգ
ամս ընդ ունկնդիրս կացեն և հաւասա-
րեցին աղօթից միայն, և .յետ կատարե-
լոյ զժամանակ աղօթիցն հաղորդեցին օրի-
նաց: Իսկ որ կանամբիքն են և անցեալ
ուրեմն զյիսնամենիւք՝ և զնոյն մեղիցեն,
այնպիսիքն ի վախճանի կենաց միայն հա-
ւասարեցին աղօթից, (այսինքն յանդա-
մակցութիւն եկեղեցւոյ կոչեցին):^(**)

17. — Զանանապիղծս և զբորոտս^(***)
(զբժաւորս) որ զախտս իւրեանց փոփոխեն
յայլս՝ սահմանեաց սուրբ ժողովն ընդ դի-
ւանաւս կալ յաղօթս:

18. Եթէ եպիսկոպոսք ոմանք հաւա-
սացեալք՝ ո՛չ լիցին ընդունելի յայնմ իշ-
խանութեան՝ յոր կարգեցան, և յա՛յլ իշ-
խանութիւնս կամիցին մտանել և բռնա-
դատեալ մերժել զեղեալսն (զեպիսկոպո-

(*) Հայ կանոնագիրն ունի ընդ ձեռնաւք
(=ընդ կարգօք) բացատրութիւնը:

(**) Մեր կանոնագիրքն ունի «զյիսն
թոշակն տացեն»:

(***) Հոս բորոտս կամ բժաւորս բառով
ի դէպ է հասկնալ անբախտ (վասն պղղ-
ծութեանն): Ըստ ոմանց անանապիղծու-
թիւնը տեսակ մը տարափոխիկ ախտի պատ-
ճառ կը նկատուէր:

սունս) անդ՝ ամբոխս յարուցանելով ի վերայ և խռովութիւնս, զաջնալիսին արժան է մերժել: Սակայն թէ կամեցին յերիցութեան կարգի՝ յորում էին յառաջն՝ նըստիլ, ո՛չ անկցին ի պատուոյ աստիճանացն՝ այլ՝ եթէ հակառակեցին ընդդէմ եպիսկոպոսաց տեղոյն, լնկեցեալ լիցին ի պատուոյ անտի երիցութեան և հրապարակաւ մերժեցին յեկեղեցւոյ:

19. — Որք զկուսութիւն խոստացեալ՝ ստիցեն խոստմանն, եղիցին որպէս այն որ երկուս կանայս արարեալ իցէ: Եւ վասն կուսանացն որ մերձենային առ ոմանս իբրեւ քորթ(*) զաջնալիսին խափանեցաք, զի մի ևս չիցին:

20. — (**) Եթէ ուրուք կին չնացի, կամ չնացէ ոք (այրն), կա՛մ եղև մորձեցուցանել զնա ի կատարեալն՝ յետ եօթն ամաց, ընդ աստիճանս ապաշխարութեան անցուցեալ:

21. — Կանայք պոռնկացեալք՝ որ զծրնունդս իւրեանց սպանանեն և վիժեցուցանեն զպտուղ որովայնի իւրեանց, առաջին կանոնքն(***) մինչեւ ցօր մահուան արգելուն:

(*) Ըստ Հէֆէլէի՝ իբրեւ *συνισχισμός* ծառայելու սովորութեան կ'ակնարկուի այս կանոնով: — Յոյն բնագիրներէն ոմանք փոխանակ ձգ *ἀδελφός* ի ունին ձգ *ἀδελφοίς*: այն ատեն պէտք է թարգմանել իբրեւ ընդ եղբայրս:

(**) 20—25 կանոնները կը պակսին մեր Կանոնագիրքին մէջ, սակայն Կեսարիոյ կեղծ ժողովին Ա. Գ. Դ. Ե. և Թ. կանոնները ասոնցմով ձեւացած են:

(***) Հնագոյն կանոնի մը կ'ակնարկուի:

դնոսա (ի հաղորդութենէ եկեղեցւոյ)՝ այլ մեք մարդասիրութիւն ցուցեալ՝ սահմանմբ զտաննամեայ ժամանակ՝ ըստ աստիճանացն կարգելոց յապաշխարութիւն:

22. — Որք զկամաւոր սպանութիւն գործեցին՝ կացցին առ դրանն և ի վախճանի կենաց արժանացցին կատարելոյն (օրինաց Ս. Հաղորդութեան):

23. — Վասն ակամայ սպանութեանց առաջին կանոնքն հրամայէին յետ եօթն ամի հաղորդել ի կատարեալն, անցեալ ընդ սահմանեալ աստիճանն (ապաշխարութեան). իսկ երկրորդն(*) զհնգամեայ ժամանակն հրամայէ ընդ միայն:

24. — Որք գուշակութիւնս առնին և սովորութեանն հեթանոսաց զհետ ընթանան, կամ ածեն զոմանս ի սունս իւրեանց առ ի գիւտ կախարդանաց կամ ի սրբութիւն անձանց, աջնալիսին ամս հինգ՝ ըստ կանոնի սահմանեալ աստիճանացն ապաշխարեցեն: Երկու ամս առ դրանն և ամս երկուս պարագեցին աղօթից առանց նուիրանաց *προσφορά*:

25. — Եթէ ոք խօսեալ աղջկան ումեք՝ զքոյր նորա պղծիցէ և նա յղացի, և յետ այնորիկ ամուսնացի ընդ խօսեցելոյն և պղծեալն իեղդ ընդ անձն արկեալ մեռանիցի, հրամայեցաք զի որ կցորդք և զեն յանցանայն՝ ամս տասն կացցեն յոսին ըստ սահմանեալ աստիճանացն:

Ե . Ե . Դ .

(*) Կ'ակնարկուի ներկայ ժողովին կանոնագրութեանը:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՐՈՋՆԵՐ

«ԳՆԱՑԷ՛Ք ԱՅՍՈՒՀԵՏԵԻ

«աշակերտեցէք զամենայն հե-
«թանոսս, մկրտեցէք զնոսս
«յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-
«ւոյն» սրբոյ:» ՄԱՏԹ. ԻԸ. 19:

Ա.

Երկնայած աչքերը դէպի հեռուները սեւեռած, ո՛չ կնճիռ ձակտին, ո՛չ ալ խոր-
շում դրախտացած այտերուն, այլ ժպիտ մը
աստուածացած, բարբառ մը մարդեղացած,
չեչտ մը հոգիացած, կ'ըսէր. — Գնացէ՛ք շատ
հեռուները մինչեւ հեթանոսներուն, հոն ուր
ձեր անձնուէր առաքելութիւնը երկինք
պիտի բարձրացնէ ուրախութեան ու ցնծու-
թեան աղաղակները, և ո՛ւր պիտի դադրին
այլեւս անէծքի քուլա քուլա ծուխերը և ցա-
ւերու ամպացած մուխերու երկնախաւ
բարդումները, որոնք չպիտի ծլին ու ծա-
ւոնան Շնորհաց աթոռովը, երբ ձեր ոտ-
քերը ման գան, խօսքերնիդ չըջան աւնէ
և ձեռքերնիդ խաչանիչ օրհնէ ի ծագս երկ-
րի: Գնացէ՛ք մինչեւ լեռներու երկնաշու-
գագաթները, խորը անապատներուն, խո-
րութիւնը ծովերուն. քարոզելու հոն, ուր
ձեր ծառայող աշակերտութիւնը հրեշտակնե-
րուն պիտի հասցնէ անմեղ ու զուարթ եր-
գերը խնդութեան, ու հոն պիտի դադրի
արիւնի հոսումը, կեանքերու դիակիզումը,
երկիրներու մոխրակոյտերը, ու անոնց բու-
ղոքողի ձայնը ա՛լ չպիտի տեղի ունենայ և
համի արդարութեան պալատին: Ու կը
կրկնէր նոյնը. — Գնացէ՛ք այսուհետեւ, Մեծ
Խորհուրդը իրականացած է, սքանչելիու-
թիւնը յայտնուած, ճամբան պատրաստուած,
ուղին հարթուած, եղբայրութեան դաշն
կռած, փուշն ու տատասկ քաղուած, մեղ-
քը կապտուած, յանցանքը թեթեւցած,
աշխարհ յաղթուած, գերին ազատուած,
ստրուկը փրկուած, բարբարոսը ինկած,

բռնաւորը կալանաւորուած. այսուհետեւ ոչ-
խարհի իշխանը փախուստ պիտի տայ ձեզի
հետ մաքառելէ ու արքան՝ ճակատամար-
տելէ, բռնակալը՝ ահաբեկելէ, մոլեգին ամ-
բօխը՝ կատաղի կուռելէ, ու մոլեռանդա-
թիւնը տիրապետելէ: Դուք պիտի ներկա-
յացնէք այն պատկերը որուն վրայ յաւի-
տենական արդարութիւնը վրձնուած է,
ու ձեզմով ձեր հետագանները ու դարերու
անիւնները իրենց հովովումին մէջ նոյն այն
անեղծ պատկերը, իր բազմակողմանի
երանգներով ու գծերովը, պիտի ցուցադրեն
այն որուն համար ձեզ կառաքեմ: «Գնա-
ցէ՛ք այսուհետեւ, քարոզեցէ՛ք զամենայն հե-
թանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր, և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»:

Յիսուսի այս Աստուածային պատուէրը
որչափ քաղցրօրէն եղբայրաբար, նոյնչափ
վեհօրէն հայրաբար և այնչափ պատգամօ-
րէն տիրաբար առաքելոց փոքրիկ ջոկատին
վրայ մեծ ազդեցութիւն և մշտնջենի տպա-
ւորութիւն մը գործեց, ու ծնաւ իրենց մէջը
անջնջելիութիւն մը: Յորչափ առաջները
Յիսուսի հետ ապրած, անոր հետ քալած
ու ծառայած էին: Բայց ոչ այս ազդեցու-
թիւնը կրած էին և ոչ սոցն տպաւորութիւնը
գործած. մինչդեռ այս պարբերութիւնը,
որ պարտք մը ու պարտաւորութիւն կը
գծէր բնորոշող ու յատկանշող, կը տիրա-
չեչտէր. — Գնացէ՛ք, այսպիսի սուրբ և նուի-
րական առաքելութիւնով, մարդասիրական
ու հայրենասիրական նախանձախնդրութիւ-
նով քարոզեցէ՛ք անոնց, երկնապատուէր
ջանադրութիւնով մկրտեցէ՛ք անոնք, որոնք
խառարին մէջ կը խաթաւփին, դարաւոր
գերութիւնով կը տաղտապին, ստրկու-
թիւնով կը տուայտին, թշուառութիւնով
կը տապկուին, կը գերին ու կ'աւարին,
կ'անիրաւին ու կը չարչրուին, կը զրկուին
ու կը զրպարաւորին. գացէ՛ք, մի՛ դեղւեիք
ու դանդաղիք, մի՛ երկմտիք ու յուսահա-

տիք, այլ քարոզեցէք հաւատով ոչ թէ թոյլ խօսքով, հապա անձին օրինակով, մկրտեցէք սիրով չէ թէ լոկ ջրով հապա երկնային հուրով, որ մաքրուին, սրբուին ու նուիրագործուին, Ս. Հոգին անոնց մէջ դործէ, բարձրագոյն ոգին ներշնչէ, ու հա ա՛լ պիտի դադրի չարն ու դաժանը, յանցանքն ու թերութիւնը, մեղքն ու մասնանքը, դաւն ու ասելութիւնը, պիտի խորտակի ամբարտաւանութիւնը, պիտի տապալի անգութիւն բռնակալութիւնը, վայրագին սիրապետութիւնը, ջնջուի պիտի կապուան ու կողոպուտ, թումբ կանգնի իսկէչի լկտի բարոյքին, անբարոյ մտածումն, յայրատ նայուածքին. պիտի կարկի կարկամի շողում շողոքորթին լեզուն, խանձին ու աղնձին զրպարտողի բամբասողի շրթները: Հօրը, Որդին, Հոգին անուշովը նուիրագործեցէք մարդը, որպէս զի թշուառ մարդկութիւնն երջանկանաւայ, ինկած բարքերն աղնուանոն, կոտրած սրտերը յինուին, լքուած հոգիները կնիդանան, բարոյական իշխանութիւնը հաստատուի, հոգեւոր թագաւորութիւնը գերիշխէ, անիրաւներն իրենց գիրքերէն խախտին, անիրաւեւաններ իրաւունքի աէր դառնան, հպարտներ ցածնան, խոնարհներ բարձրանան, պարարտներ քաղցին, անօթիներ յագենան:

Ո՛չ, այլևս մեզի ծանօթ երկչոտ ձրկնորաները չէին մնացած, որոնք մանաւանդ Յիսուսի տառապանքի ու չարչարանքի օրերուն հոս ու հոն ցրուած, դասալիք եղած էին: «Այսուհետեւ»ը պիտիք զարթնեցուցած ու ամբապնդած էր. այդ բառը ամբողջ յաջողութեան մը գրաւականն էր, յոյսի հաւաստիքն էր. երէկի այն անուշ ու անյոյաներն այսօրուան ու վաղուան յաջողութիւններով խիզախ ու հպարտները որոշուած էին. իրենց սրտերն այնչափ բարձրացած էին, որ կարծես աշտարակներու վրայէն հեռաւոր ու փառաւոր ապագան կը տեսնէին յուսթի ու բերրի դաշտի մը հանգոյն:

Յուսի ի ձեռին, մախաղն ի յուս, մին բարձրացաւ Հայքուն ու Հայաստանին սառնամանոտ սարերն ու լանջերն յաղթ ու կո-

թող լեռներուն, որուն հեթանոսութեան չատուածներն ալ նոյնչափ յոխորտ ու դողորդ: Միւս մը նետուեցաւ խորն ու գոգը եթովպիոյ աւաղուտ ու կրանուտ տափարակներուն, որոնց պաշտամունքի առարկաներն ալ նոյնչափ աւաղացած ու տափակացած: Ուրիշ մը քերեց ափերն ու եղբ'րը ծովերուն, որոնց կրկրագեղիները նոյնչափ խոր ու ամենի, այնչափ ալ յեղյուակ: Չորրորդ մը Պաղեստինը չափեց ու ձեւեց, յուզեց ու դղրդեց չորս կողմերովն ու չըջանալովը: Ու կը քալէին առանց թերահալու ու թէսնալու, տատամսելու ու սրտմտելու. լանջերին կը փքար, սրբատերին կը հեւար, շրթներին կը դողար, շունչներին կը հատնէր, երբ կը տեսնային մարդն ու մարդկութիւնը գիշերուան մութին մէջ, խաւացած ու խուարացած խաւարին մէջ, մեղսապարտ ու մահապարտ բռնաշապկին մէջ. ոգորուն ու տոգորուն կը փուղէին ամենի բուրգերը բարձրացած, հեթանոսի պաշտաման գէգերը չորացած, փտախաւարի սրտերն ու հոգիները մոխրացած, դիւաբախ բարքերն ապականացած, վարքերն այլասերած ու վատթարացած, կեանքերն աղտեղած ու ախտացած:

Նուիրուածները բլիկ բլիկ կ'ընէին դիմակները կեղծաւորին, կը մոզմանէին անկարգին ու անազորային անսանձ կրքի մուրացները. և ի լուր կ'աւետարանէին և հանգիսական կը քարոզէին ու կը մկրտէին Անոր անուամբը որ ոչինչէն ի գոյ անեց բովանդակ տիեզերքը, իր սքանչելի յայտնութիւններով, անտեղիսալի օրէնքներովը, և դեռ անգիտանալի գաղտնիքներովը, Անոր որ ողջ ու ամբողջ աշխարհին Չոհն եղաւ, կտրիչին առջեւ անմեռնչ ու անտրտունջ Դառնուկն եղաւ, պարգեւելու աշխարհին Յաւիտենական Գեղմն, որով փառաւորէր արդարութեան անմաշ, ճշմարտութեան տնհալ, և սիրոյ անթաղ հանգերձանքովը:

Ու կը գնային. և երբ կը յոգնէին, նոյն այն անուշ անուշ ձայնն էր որ կը հասնէր իրենց. — «Գնացէ՛ք» . երբ կը պարտասէին միեւնոյն քաջալերիչ «Այսուհետեւ»ն էր որ կ'արձագանգէր, երբ դժուարութեան խոչն

ու խոսքն իրենց առջեւ պատնէշ կը կանգնէր, ահա՛ Աշակերտի ու Առաքեալի ստանձնուած պարտքի բեռն էր որ կը դրդէր զիրենք միշտ քալելու ու քարոզելու «զամենայն հեթանոս», որոնք մշտնջենի լոյսէն զուրկ, Յաւիտենին ճշմարտութենէ անգէտ, նկարագիր, ընդունակութիւն, լոյս ու յոյս կիրք ու ձիրք դէպ ի բարձրացում՝ դիակնացած էին։ Կենդանացնելու համար միրտել պէտք էր Հօրը անունով որ Գերագոյն Արդարութիւնն էր, Որդիին անունով որ անվախճան Սէրն էր, Հոգիին որ անհասանելի Իմաստութիւնն էր։ Ու ահա երեքը ի մի երրորդացած պիտի չնորհէին ընդունակին Սրտի երրորդութիւնը, Հաւատ, Յոյս, Սէր, փոքրիկ այլ չափ մեծ Հանգանակը։ Գերագոյնին լուացումով, անվերջին օծումով, ու անհասանելիին դրոշմովը կեանքի ամբողջութիւնը պիտի սրբուէր ու նուիրագործուէր, որով կեանքերը ինկածութենէ, պատիւները ստորնացումէ, գաղափար ու զգացում ժանգոտութենէ, տուն ու ստացումը գերիւմէ պրծած, անհատական ու հանրական գերութեան ազատութիւնով փոխարինուած պիտի լինէին։ Հայուն Դրոխտ Հայրենիքի սարերէն ու լանջերէն խաւարն ու գիշեր փոխ էին տուած, չըջուած ու ինկած էին բարձրասուր բրգոտ մահաւանդները, դաշտին խորը թագաւորած կրակէ տունները, ձորերու ու հովիտներու թփուտքին տակ շքաւորած ու երկնաւորած Սօստակիքը, Դիցունիներու գեղեցկութեան կուռքերը, իմաստութեան, համեստութեան չԱստուածները, համեստութեան քօղին տակ անհամեստութիւնները, զօրութեան վահաններու ու վահագններու անգորութիւնները, քուրմ ու քրմաստան ամենը իրենց անձուկ ու վաղանցուկ հովաբախ քղանքներով ալ անզօր ու երեւկոտ՝ տեղի տուած էին ճշմարիտ ու կենդանի Ամենագործութեան, ու Ան կը փառաւորուէր յաղթական, ու կ'երկրպագէին բիւրաւորներ, գետեր ու ծովեր աւազաններու փոխուած էին, իշխաններ ու արքաներ կնքահայրերու, և քուրմ ու քրմապետներ ճշմարիտ Բանին հաւատարիմ սպասաւորներ ու քարոզողներ։ Այսուհետեւ քարոզին ու միլը-

տութեան ծիրն ու ծլօտ պարարտ ու արգաւանդ հողերու գիրկը, հերկուած ու աւօսուած ու այնչափ աճած ու ցօղուններ հոսունցած, մէկին տեղ կը տասնաւորէր լեռներու թաւ ու թուխ լանջերուն վրայ, որպէս Լիբանանի մայրիներ, կաղնիներ այնչափ գեղուղէշ նոյնքան գրկաչափ և քանի՛ արմատացած կ'ածէր ու կը դարաւորէր։ Շէն ու գիւղ, աւան ու քաղաք ու մայրաքաղաքներ ամբողջապէս ուր որ քարոզուած էր Աւետարանը ու Անոր մկրտութիւնը, հոն աներ էր մօրափրօսութիւնը յանուն Արդարութեան, ուր Սէրը յաղթանակած էր, հոն նահատակներու համբանք բազմապատկած էր, ո՛ւր կենդանի Հաւատքը, աստուածացած Սէրը, յաւիտենական Յոյսը սերմանուած էր, հոն քանիներ էին որ ձգած էին պերճ պսճուճանքները, որոնք տնիրաւութեան մանգաղներով հնձած էին իշխանաւորի մեծափարթամ վայելքը, որ զրկուածին քրտնիքովը վատարած էր։ Արքայափառ վնահաշքութիւնները որք կեանքերու փճացումովը ճոխացած էին, թողուցած էին աշխարհիկ մոլիսացած հաճոյքները, անբարոյիկ յոռեցած լրբութիւնները, մորոսացած ատելութիւնները, իրար անձեռելու ու անջատելու անազնիւ խորհուրդները, աղքատին ամբարտաւանքը, հարուստին անվայել արարքը. ու փոխան սարերուն ու կատարներուն, մեռածանաներուն շարքն ու շղթաներն էին գրկած ու թագաւորած, և այդ բարձունքները սրբութիւններով լեռնացած, կամաւ անձնուրացներ, գիտակից զրկուածներ ինքնովին, որոնք օրն ի բուն աղօթքին ու աշխատանքին մէջ թաղուած ու վերացած էին. անոնց մտաւորականութիւնը ոսկեաւարած, գիրն ու թուղթ սրտալար ու երկնալար գրուածքներով բարձրերէն ու վսեմէն ներշնչուած, ու դեռ այսօր կը ներշնչեն ու կը յուզեն մեզ, եթէ պահ մը անոնց լսենք ու անոնցմով գէթ ուշաբերինք. որոնք զմեզ կը տանին հորիզոններէ անդին, Անհունին, Բարձրագոյնին, Գերագոյնին, որ Վսեմին, Ազնիւին, Կատարեալին տուն կուտայ։

Հա՛յ ժողովուրդ. անցեալը թող քեզի երազ մը չթուի. ներկայիս կատարուած-

ներն ալ թող քեզ պահ մը փոխադրեն այն սրբավայրերը որոնք այժմ աւերակներու կոյտերու են վերածուած, այն միլիոնաւոր թիւերուն, որ այսօր բերաւորներու են իջած, այն կեանքերուն որ այսօր գերիի ու ստրուկի մեղծ ու անեղծ վիճակին են ենթարկուած. ջարդն անվերջ, աւարն անվախճան, խաւարը միգապատ, քաղաքներ թմրածի երեւոյթով, գիւղեր հատածի ու քրքրուածի պատկերներով. իսկ չէներ ամբողջովին մոխրացած, ամէն կողմ մեռելութիւն, ողջ ցերեկը մթապատ, ամբողջ գիշերն ուրուտակներու ստուերներով մթագնած. քանի՜ քանի՜ օճախներ մարած, ռոչափ տուներ անցած, այնչափ կեանքեր, աւանդ, մարած. երիտասարդը դեռ պսակի ծաղկեպսակին տակ, հարսն իր քօղին, մանկին իր փթթումին մէջ: Աչք միանց որ արտասուէ, ձեռք միանց որ արցունքը սրբէ. զարմանալի լուծութիւն, խորհրդաւոր պապանձում ոճիրով ու եղեռնով յղի մոլեռանդութիւններու անվերջ անալի-ութիւններու մէջը. ո՞վ ձայն ու ձիկ պիտի հանէ. գերեզմանատուններու մէջ հանգրտացածները, որոնք դեռ իրենց վրայ գործուած անյուր վայրագութիւններու կոտորածները ունին. արիւնոտած ու ճենճերած վայրերը, որոնց մէջ միմակ բուն կը բռնալընայ:

Հայ ժողովուրդ. գիտե՞ս, քանի էին թիւերը սուրբ մենաստաններուդ որոնց շատր այսօր շաքաթացեալ են և միացեալք նոյնին հաւասարած, աղօթքը դադրած, խունկը հատած, պլպլացող պատրոյգը չիջած, սրբութիւնը պղծուած, տուն ու գոմ է եղեր անանկներուն, որոնք լկտի ու խենչ կեանքով պապերուդ ու քու սիրտդ կը կծեցնեն. ու քենէ եղողներուն մէջ ալ կը գտնուին անանկներ, որոնք եղածներուն մէջ նստի կը բերեն նախնի սրբակեացներուն: Գիտե՞ս, որչափ էին քու տաճարներդ մեծածախ ու արքայաբաշխ, որքան հոյաչէն այնչափ բազմաչէն, քանի հիւսէն նոյնչափ բերաչէն, ու հիմակ հնաչէն ու կիսաչէն, հրկիզուած, թալանուած, անշքացած. հոն ջերմութանդ պսպիրդ, պապերուդ պապերը կը փութային ամէն օր յուստ

և յերկրպագութիւն ու իբր նուիրական սուրբ պարտաւորութիւն. իսկ դուն երեսդ չուռ ու չուռ կուտաս, չեմ գիտեր ի՞նչ ճաճար կանգնեցնել կ'ուզես անոր տեղ, որ կարենայ պահել քեզ ու ինքնութիւնդ և ամբողջ գոյութիւնդ, ու դուն առանց լաւ մտածելու ձախարհութեանդ, թըշուառութեանդ, անյաջողութեանդ պատճառը անոր կը վերագրես, գերութեանդ և ստրկութեանդ բեռն անոր չալակին կը բեռցնես, մինչդեռ անի ամէն օր քեզ աղատութեան ճամբան կ'առաջնորդէ, քեզի հաւասարութիւն կը քարոզէ, համարաշխարհիւն կը բարբառէ, քու քուէդ, ձայնդ օրինաւոր կը սեպէ. չէ թէ լոկ գերեաց ազատութիւն կը խնդրէ, այլ իշխանութիւն ալ... գործի յաջողութիւն, կեանքի երկարութիւն ու ամեն ամենը: Ու դուն մոռնալ կ'ուզես անոր քսան դարերու պատկառելիութիւնը. ու կը յանդգնիս մրտախու ալ անոր լուսափայլ ճակատը ու ծառայելու անոր ամենի ու վիթխարի չէնքը: Եթէ Գրիստոնեաներն ամբողջ մոռնալ ուզեն, դուն չես կրնար, ու երբէք. զի քու սիրելիներուդ արիւնովը շաղախուած են անոր պատերը, ու հոգեհատորներուդ կեանքովը՝ հիւստածքները. ու եթէ յամառիս քակելու, թէն դուն կը քակուիս. ի՞նչ չինել կ'ուզես. հողէ՞ տաճարներ որ անձրեւներու չդիմանան. կաւէ՞ որ շուտ փխրի, աւազներով վրայ որ հեղեղները տանին: Հայ ժողովուրդ. քեզի քարովուածներուն ու զի՛ր. պապերդ երկիւզած ու այնչափ պատկառած պաշտամունքէ, քարովութենէ, մկրտութենէ, ետ չէին մնար, ու փոխարէնը կ'ընդունէին այն ամէնը, որը իրենց մէջը կը կերտէր մարդասէրը, ընկերասէրը, հայրենասէրը, առաքելին, ազնիւը, մեծանձն ու կատարեալը:

Գիտե՞ս, քանի՜ ու որչափ լիքն էին մատուներդ, ուր ամէն օր խունկ ու մոմ, աղօթք ու մրմունջ անասնոման արգարին, բարիին, իմաստունին, կը բարձրանային որչափ ինկազօծ, նոյնչափ սրբազօծ: Ամէն տուն իր մատուռը, ամէն կտրիճ իր սուրբ ունէր, ամէն գերդաստան իր աղօթա-

րանք, ամէն վաշտ իր խորանն ու սեղանը: Պակաս էին հիւանդատուներն ուր քու ախտակիր աղբրտիքդ կը վարմանուէին. նուաճ էին արդեօք անկեղանոցները, ուր անտուն ու անկար ծերերն ու խեղանդամները կը կերակրուէին. հապա հովոցն՝ որոնց շուքին սակ նախնիքներդ մը մը կը քնանային յաւիտեանին քունը անվրդով, մինչդեռ հիմակ ատ ալ կը զլանան քեզի...: Կրնայի՞ր համեկ քու մարտիկներուդ թիւը, բամբիշներու կարգերը, ըմբիշներու պեւերը: Վնասէ՛, խուզարկէ՛, գէթ ստոնցմէ ցոյց սուր տանտեակներով: Ու նորէն քու նախնի փառքիդ ու անցեալիդ հասնելու համար որով և ի՞նչ միջոցով պիտի գնաս: Եթէ ո՛չ «Գնացէ՛ք այսուհետեւ»ով, թէ և դուն քիչուր ալ լինիս, ինչպէս Առաքեալները, որոնք բուռ մըն էին, բայց ամբողջ գրիւ մը ալիւրը խմորեցին, մանանեխի հասիկ էին, բայց անտառներ հասուցին, տամեակ մըն էին, բայց միլիոններ լինցուցին, զի գերագոյն արդարութիւնը քարոզեցին, անմահն ու ալման սէրովը մկրտեցին ու անասման իմաստութիւնովը նուիրագործեցին:


Հայ ժողովուրդ. ո՛րչափ Հայն ու Հայրենիքդ այդ քարոզութեան ունկնդրեց և ըստ այնմ վարեցաւ, և քանի՜ նոյն Մկրտութիւնով մկրտեցաւ և հոգւով սրբապաւ ու իմաստնացաւ, այնչափ զօրացաւ, նոյնչափ բազմացաւ, որչափ հալըստացաւ, այնքան ճոխացաւ, հալածուեցաւ բայց տարածուեցաւ. չարչարուեցաւ սակայն առաքինացաւ, սպաննուեցաւ, ջարդուեցաւ բայց յոսին կանգնեցաւ:

Հայ ժողովուրդ. ո՛ր դասակարգին ալ

պատկանիս, կարգա՛ ու հետեւէ նոյն նախնիքներուդ, որոնք հաւատացեալ, անձնուէր, զոհարեր, աներկիւղ, ընտանեհէր էին, յեղափոխուող դէպ ի աղնին ու ճըշմարիտն և սէրն երկնային, որոնք բռնակալութեան ու բարբարոսութեան դէմ կուռեցան և բողոքեցին, խարաղանեցին, մատնանջեցին, հարուածեցին, և սակայն իրական յաջողութեան մէջ իսկ հաւատարիմ: Ուսային Հայրերու կրօնին, անեղծ Տաճարին և շնորհապարտ ու երախտապարտ անոր նուիրականութիւններուն ու անոր Առաքիններու գործոց: Կարգա՛ և տես թէ քանի՜ անգամներ և միշտ իրենց հետ վեր կ'առնէին շարժական եկեղեցիներն աստուածընկալ խորաններով. վաղուան կուռին համար որչափ զէնք ու ազդեալ միջերք, նոյնչափ աղօթքի ու պաշտաման առարկաներ ալ չէին մոռնար, հաւատքի սեղանը, սրբութեան խորանը, յաւիտեանական հացը: Կրնա՞ն հերքել, կրնա՞ն ուրանալ անոնց ձախողութիւններու շարքը. անոնք իրենց ուժէն, ազդեալարութենէ աւելի գերմեականին ու անոր երկնառաք յաջողութիւններուն կրթնած էին. խաչը սուրին հետ. Աւետարանը դրօշին հետ ու այնպէս կը թռէին ձիերու քամակին: Ու դուն հիմակ ո՛չ Սուրբ Գիրք գրգռնիդ ու գլխիդ ունիս, և ո՛չ խաչ սուրիդ հետ. մէկը արտաքին կեանքդ, իսկ միւսը ներքին կեանքդ պիտի պահէ, և դուն երկուքին ալ զուրկ օրէ ցօր կը յուլանաս ու կը մեղկանաս: Ո՛վ պիտի ըսէ թէ Գնացէ՛ք այսուհետեւ:

ԳԵՌԳԻ Ն. Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

Խարրերդ



ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ իր Շառաւիղները. —
Ոսկեանք եւ Սուխասանք. — Ս. Սահակ Պարթեւ.
— Աստուծանք. — Ղեւոնդեանք. — ՎԱՐԴԱՆԱՆՔ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ տօնակատութեանց շարքին մէջ ուշագրաւ չըջան մը կը ներկայացնէ վերջացող Փետրվար տօնոր: Մարտիոսներն եւ՝ վկաները, եւ՝ զօրավարները, եւ՝ քահանայներն ու հայրապետները, բոլորն ալ տմնադարձ խեղալի մը համար անձերնին նուիրած ի հուր եւ ի սուր, եւ ամէն տեսակ տառապանքներու եւ տաճնապնդներու ենթարկուած, հիմնալի օրինակներ կ'ընծայեն Կամքի երկաթէ ուժին, որ տխրոյ հոգիները կը դարձնէ բարձր իմացականութիւններ, եւ ազգազուն մարմինները կը փոխէ աննկուն մարտիկներու:

Ատոնց հրաշալի օրինակին ցուցադրութիւնը՝ հաւատացեալներու աչքին, ամենակարեւոր շարժաւթիներէն մէկն եղած է եկեղեցական տօնակատարութեանց: Մեծ մարդոց կենսագրութիւնը գիտենք թէ ի՞նչ հակառակ դեպքերէն կ'ընէ միտքերու եւ նկարագիրներու վրայ: Յաւալի է որ Յայտաւորքի ընթերցումը ամէն իրիկուն եկեղեցիներու մէջ, բոլորովին մէկգլի թողուած է մայրաքաղաքին մէջ, եւ միայն Կաղանդի տառուան պահուած կը լինայ, օրուան յիշատակի տիրոջ՝ Ս. Բարսեղ Հայրապետի կեանքի դրուագներուն յիշատակութեամբ: Անշուշտ Յայտաւորքին մէջ կան հատուածներ որոնց ընթերցումը կըրնայ պատշաճ չնկատուիլ. սակայն միայն ատոնց յապաւումն աւելի օգտակար պիտի ըլլար, պահելով Յիսուսի կեանքին ճշմարիտ հետեւորդներուն օրինակելի գործերու վերջնութիւնը: Իրաւ է թէ այդ վերջնութիւնը՝ պէտք է ըլլայ ժողովուրդին, եւ երբ ժողովուրդն իր բացակայութեամբ կը փայլի եկեղեցիին մէջ...: Մնացեալն յայտնի է:

Ուրիշ առթի թողլով խօսիլ Եկեղեցիէն հեռու ապրելու հետեւանօք յառաջ եկած բարոյական մեծ վնասներուն մասին, մենք պիտի ուզենք նայուածք մը ձգել Փետրվար ամսոյ մէջ տօնուած սուրբերու կեանքին վրայ: Այդ ակնարկը շահեկան պիտի ըլլայ, անոր համար ժամանակը որ մեծ մասամբ Հայ սուրբեր կ'անոնք, Հայաստանի հողին վրայ ապրած, այնտեղ գործած, այնտեղ սերմանած ճշմարիտ կրօնքի բեղմնաւոր սերմերը, եւ ա՛յնտեղ ընդունած իրենց սուրբ կեանքի վախճանը՝ նուազատակութեան պատկը խլելով ընդհանրապէս:

Ամսուան առաջին շաբաթ օրը կը սկսէր ազգային տօներու շարքը: Փետր. Յին Հոյ Եկեղեցին տօնեց ցնծութեամբ յիշատակը «Սրբոց որդւոց եւ թողանց Սրբոց Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի»: Պաշտելի՝ հոգիներ, հարազատ Շուռաւիղներ իրենց հօր, եւ հաւատքի, կամքի ու դործի խեղալ մարմնացում այն վեհ հոգիին, որու քաջամանօթ չարչարանքները եւ ի խոր վիրապ հնգեւտասան տարիներու արգելափակումը ճշմարիտ ապացոյցներն են իր հաստատարութեան, որով կը կշռէր Աւետարանի ճառագայթարձակ լոյսի ազդեցութիւնը՝ խաւար, անմշակ հոգիներու վրայ:

Բրիստոնէական ուրիշ Եկեղեցիներէ եւ տօնուած այդ չքնաղ անձին՝ Ս. Լուսաւորչին Շառաւիղները, մինչեւ Ս. Սահակ Պարթեւ հայրապետ, որ վերջին ու փառաւոր ներկայացուցիչն է Պարթեւ հայրապետներու շարքին, աւելի քան հարիւր տարուան ժամանակամիջոցի մը մէջ առաքելական արդիւնաւոր գործունէութեան հոյակապ չըջան մը բոլորած են, որո, աւետարանական կրօնքի մը լայնագի վարդապետութեան սերմերը սփռելով Հայաստանի եւ անոր անմիջական դրացիութեան մէջ գտնուող ազգերու մէջ:

Նոյն ինքն Ս. Լուսաւորչի կենդանութեան

թեան իր հօրը կաթողիկոսական աթոռը նստաւ Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ, անոր կրտսեր զաւակը, որ ժամանակի սովորութեան հա- կառակ՝ չմտաւ ամուսնական կեանքի մէջ: Լուսաւորչեան տան յատուկ նախանձա- խընդրութեամբ պահեց իր հօր գործն ու տւանդութիւնը, և գործօն կեանք մը ու- նեցաւ՝ նոր քրիստոնէացած ազգ մը ճշ- մարտութեան կրօնքին մէջ ամրապինդ հաստատելու համար: Ան էր որ իբրեւ կարող անձնաւորութիւն մը, Նիկիոյ՝ Տիե- ղերական Ա. Ժողովին մէջ (325) ներկա- յացուց Հայ Եկեղեցին՝ ի դիմաց Ս. Լու- սաւորչին, և Հաւատոյ Հանգանակը—Հա-ւատամքը—բերաւ Հայաստան: Եօթը տա- ռի արժանաւոր կաթողիկոսութիւն մ'ըրաւ, և նահատակութեան պսակն ընդունեց՝ Չորրորդ Հայոց վերակացու Արքեպիսկո- թիքանի վատ արարքը յանդիմանած ըլլա- լուն համար սրով սպաննուելով Ծոփաց գաւառին մէջ (333) և թաղուեցաւ Թիւն աւանը (Երզնկա):

Անոր յաջորդեց երէց եղբայրը՝ Ս. ՎՐԹԱՆԷՍ՝ որ ամուսնացած և երկու զա-ւակ ունեցած էր, Ս. Գրիգորիս և Ս. Յու- սիկ: Զօրեղ ու փայլուն նկարագրի տէր անձնաւորութիւն մ'էր աս ալ, որ մեծ և իրական ծառայութիւններ ըրաւ Եկեղեցիին և ժողովուրդին: Յովհան Երզնկացի յայտ ներբողալից տողերով կը պատկերացնէ Ս. Վրթանէսի կեանքն ու գործերը, որ չեն սահմանափակուած լոկ հոգեւորին մէջ: Երանելի հայրապետը՝ մեծ ճիգեր ըրաւ Հայերն ազատելու համար Պարսից հայրու- տահարութիւններէն, այս սուբիւ օգնու- թիւն խնդրելով և ստանալով Կոստանդին կայսրէն, որուն ի վերջոյ անձամբ դիմելով պատճառ դարձաւ Տիրանի թագակալու- թեան: Ծշմարտապէս սուրբ մարդ մը, կը յանդիմանէր միշտ նախարարներու հեթա- նոտական վարմունքը, ու կը յորդորէր Բը- լիստոնաւալել կեանք անցնել: Այս պատ- ճառով իսկ, անոնց թելադրութեամբ յար- ձակում կրեց լեռնականներէն՝ Տարօնի ան- դրանիկ Եկեղեցւոյն մէջ, և մազապուր կըր- ցաւ ազատուիլ մահէ: (Գիտունք որ Տարօն գլխաւոր վառարանն եղած էր Հայոց հե-

թանոսական կրօնքին, և այնտեղ մղեց Լուսաւորիչ իր յաղթական մարտը՝ Արձան և Դեմետր քրմապետներուն դէմ): Ս. Վրթ- թանէս սաստիկ թշնամանուեցաւ Նոյնինքն Տիրանէն, անոր արստամոլութիւնը յանդի- մանելուն համար: Ութ տարի արդիւնաւոր պաշտօնավարութիւնէ ետքը վախճանեցաւ արդարի մահուամբ 341ին, և թաղուեցաւ Թորգան, իրենց կալուածին մէջ:

Վրթանէսի հայրապետութեան սկիզբ- ները՝ Աղուանից առ Տրդատ դիմումին վրայ, Ս. Հայրապետն իր երէց որդին ե- լիտասարդ ԳՐԻԳՈՐԻՍԸ արքեպիսկոպոս ձեռնադրելով Աղուանք զրկեց, և ասկէ ծագում առաւ կաթողիկոսութիւնն Աղ- ուանից և Վրաց, ուր կանխապէս քարոզ- ուած էր Աւետարանը, Ս. Լուսաւորիչի հոգածութեամբ, և ուր Հայոց Հայրապե- տական Աթոռէն կը զրկուէին առաջնորդներ: Վրաց մէջ Աւետարանը քարոզած էր Ս. Նունէ կոյսը, որ Հովսիսիմեանց նահատա- կութեան ժամանակ փախած էր Վրաստանի մայրաքաղաքը՝ Մծխլիթա, և անոնց Միւ- րան իշխանն ի քրիստոնէութիւն դարձու- ցած: Աղուանք նշանաւոր էին յեղուգա- կութեամբ: Գրիգորիս ազդու քարոզներով ուզեց կրթել զանոնք սիրոյ և խաղաղու- թեան կրօնքով, ինչ որ խիստ եկաւ անոնց, մանաւանդ իշխաններուն, որք Կասպեան ծովուն եղերքներուն վրայ, Վատնեան դաշտին մէջ ամհի ձիերու սմբակներուն տակ կոխկռտել տալով նահատակեցին զայն 337ին:

Հայոց մէջ, Ս. Վրթանէսի մահէն վերջ, անոր յաջորդեց կրտսեր որդին, Ս. ՅՈՒՍԻԿ, ան ալ ամուսնացած օրը պէս: Բը- լիստոնէական նախանձախնդրութեան խիստ տիպար մը, մերժեց Յուլիանոս ուրացողի պատկերը՝ զոր Տիրան կ'ուզէր կախել Ծո- փաց արքունական եկեղեցիին մէջ, և բը- լածեծ սպաննուեցաւ ճիշտ այն թագաւո- րէն որուն իշխանութեան անցնելուն այն- քան նպաստած էր իր հայրը՝ Ս. Վրթանէս: Վախճանը տեղի ունեցաւ 347ին և թաղ- ուեցաւ Թորգանի մէջ, իր հօրը քով:

Լուսաւորիչ շառաւիղներուն հետ կը տօնուի նաև Ս. ԴԱՆԻԷԼ: Լուսաւորիչ ցե-

դէն չէր թէև, և Ասորի՝ ազգով, բայց նոյն ինքն Ս. Լուսաւորչէն ստացած էր ձեռնադրութիւնը, և եղած էր երիցապետ Աշտիշատի եկեղեցիին: Աս ալ, ծերութեան տարիքին մէջ երիտասարդական կորով մը ցոյց տուաւ: Տեղեակ և պաշտպան Ս. Լուսաւորչի Տան աւանդութեանց, երիտասարդական կորով ցուցուց. ինք ալ հետեւեցաւ ազգութեան այդ անաչտ աւանդութեանց, և Լուսաւորչի հարազատ Շառաւիղներուն նման, խստիւ յանդիմանեց Տիրանը՝ մարմնաւոր իշխանութեան այդ զեղծ ներկայացուցիչը. և անոնց նման նուազատեւեցաւ խեղդամահ: Այս սրտածառով իր յիշատակը կապուած կը մնայ Լուսաւորչի որդեց և թոռանց:

Պաշտելի դէմքեր, հայրապետական հիանալի տիպարներ, զօրացած խորունկ հաւատքով, հաստատուն յոյսով և անկեղծ սիրով, որ մեզի կը յիշեցնեն բարոյական մաքրութեան, անձնութեան վսեմ պարտքերը:

Մէկ շաբթուան ոստումով մը, Առաջաւորաց պահքն և Ս. Սարգսի տօնը՝ որ դուրս կը մնայ գրութեանս հաւար գրծուած սահմանէն, — կը համինք Փետրվար 15-20ի շաբթուան, ուր կը տօնուին Ս. Ոսկեանք և Ս. Սուքիասեանք: Առաջինները՝ Հռոմէն առ Սանատրուկ եկած դեսպաններ. Հայոց առաջին Լուսաւորչին՝ Ս. Թադէոս առաքեալին աշակերտելով Քրիստոնէութիւնն ընդունած, և երկրորդները՝ Սուքիասեանք՝ Արտաշէս Բ.ի օրով՝ Սաթենիկ տիկնոջ ազգականութեան պատճառաւ Ալանաց երկրէն ի Հայս եկած և ուշակերտած էին Ս. Ոսկեանց: Այդ երկու խումբն ալ թէև ազգով օտար, բայց Հայաստանի հողին վրայ ընդունած են նահատակութեան փառքը՝ մղեգին Արտուսազգ Բ.ի օրով, մօտէն հետեւելով Հայոց առաջին նահատակներուն՝ Ս. Ադգէին, ու Ս. Թադէոսին և Բարթողիմէոսին ու Շաւարշանայ շուշան Սանդուխտին:

Յետահայեաց այս հսկիրծ, բայց անհրաժեշտ, շեղումէն ետքը, և թեթեւ ուսումով մ'ալ Մեծն Ներսէսի ժամանակա-

միջոցէն — որու վրայ մտադիր ենք առանձին յօդուածով մը խօսիլ՝ այդ վեհոգի հայրապետին տօնին առթիւ — կուգանք կը հասնինք անցեալ շաբաթ օրուան տօնին՝ Ս. Սահակ հայրապետի յիշատակին: Ս. Լուսաւորչի վերջին Շառաւիղը՝ Լուսաւոր մտքի և անձնութեան կրկնապէս չքնող յատկութիւններով օժտուած՝ ինք էր որ զօրաւոր հիմի մը վրայ հաստատեց Նոր Կրօնքը, ճշմարտապէս սուրբ վարդապետի մը՝ Մեսրոպի աշխատակցութեամբ, և ուսումնասէր թագաւորի մը՝ Վռամշապուհի աջակցութեամբ օժտելով Հայ ազգն ու եկեղեցին գրով և գրականութեամբ, որով կրցաւ Հայը՝ կարգաւ Աստուածաշունչ Գիրքն իրեն սեփական գրով ու քարաւուրով, Հոյու նաւիրական տաճարներուն մէջ փառարանելով տիեզերքի ճշմարիտ արարիչը իր լեզուով, այնտեղ լսել Հայ քարաւուրով Հայ եկեղեցականներու ազօթ ներն ու մրմունջները, Հայ շարականներն և Հայ ժամասացութիւնը, միանգամ ընդ միշտ ազատելով Յոյն և Ասորի կրօնաւորներու ազդեցութենէն, որ աղետաբեր կրօնար ըլլալ Հայ եկեղեցիի անկախութեան: Հոյակապ դէմք մ'է Ս. Սահակ ազգերու տարեգրութեանց մէջ, որուն արժանաւոր ներքոյն հիւսելու համար անհրաժեշտ է ունենալ հոգեւոր ներշնչումով օժտուած բանաստեղծի զգայուն շեշտը, և որուն յիշատակին լուսազոյն գնահատումն է միլիոնաւոր Հայ մանուկներու դարերէ ի վեր բարձրացուցած երախտագիտական մըրմունջը:

Ու կուգանք վերջին շաբթուն, որ փառապալմն ու լրումն է ազգային տօներու ներշնչող շաբթին: Հինգշաբթի օրը կատարուեցաւ մեծ տօնը, «Սբեց ՎԱՐԴԱՆԱՆԾ զօրավարացն մերոց, հազար երեսուն և վեց վկայից, որք կատարեցան ի մեծ պատերազմին»: Արդարեւ յիշատակ միտելոց, արդարեւ տօն ազգային: Յազկերտի հսկայ բանակին դէմ մղուած անհաւասար պայքարին մէջ Ս. Վարդանանց տարած բարոյական — եւ նիւթական — մեծ յաղթանակը կը թրթռացնէ ու կ'ոգեւորէ ճշմարտապէս կրօնասէր և հաւատարմ

պէս ազգասէր ամէն Հայու սիրտ: Այդ փայլուն կռիւին և տնոր նախընթաց դէպքերուն մէջ ամբողջ Հայութիւնը ցուցուց զխմորութեան աննկուն ոգի մը, որով եղբայրը պատրաստ էր եղբորը դէմ ելլել, ազգային-կրօնական ինքնուրոյնութեան մեծ դադափարին ի պաշտպանութիւն, հայրը իր զաւկին, կիներ իր ամուսնոյն: Այդ պայքարին մէջ չկար դասակարգային խտրութիւն: Բաց ի վատ մատնիչներէ, որք իրենց արժանաւոր պատիժը գտան — ինչպէս կը գտնեն միշտ, — ամէն ոք համեմատելի էր, ազատ և անազատը, իշխան և ստրուկը, կղերական և աշխարհականը, ճիւղաւոր փափկասունք Հայոց աշխարհին և քաջարի զօրավարներն Հայոց բանակին: Ու դիտելի էր որ կղերը հոգին էր այդ զխմորութեան: Կաթողիկոսը, եպիսկոպոսն ու քահանան բանակին մէջ էին. քահանան կը քարոզէր, կ'ոգեւորէր զինուորները՝ կաթողիկոսին ներկայութեանը, — ուրիշ դիտելի երեւոյթ մը որ այնքան անսովոր կը թուի հիմա՝ մեր ինկած բարքերուն մէջ —, և զինուորներն ու զօրավարները կը հաղորդուէին Ս. Փրկչին Մարմնով և Արեամբ: Առջին կը փարէին սուրին փարեղէ առաջ: Ու այս համերաշխութիւնը կը հիացնէր, յապուշ կը կրթէր զմերիմ Պարսիկը, որուն անխնայ գէնին ուխտեալ պաշտօնեաները՝ մոզն ու մոգպետը կրօնամոլ, պահ մը կը մտաբերէին թողուլ ու և է հետապնդում, ձգել Հայր իր կրօնքին ազատ պաշտօնունքին մէջ:

Հիանալի է արդարեւ այս անմահ համերաշխութիւնը, որ դուն ուրեք տեսնուած է մեր ազգին մէջ, և որուն պակասը, այսօր, այնքան սուղի կը նստի մեր վրայ, տարրամ սնորհութեան մը, խառնակութեան մը մատնելով ազգային գոր-

ծերը, և վտանգելով ազգային գերագոյն շահերը:

Ո՛հ, կարդանք Եղիշէն, Վարդանանց պատերազմին այդ հոյակապ պատմութիւնը, ոսկի լեզուով մը և ոսկի զգացումներով թրծուած. ու պիտի ցնցուին մեր հոգիները, ազգի ու կրօնի սիրոյն հաւատարմապէս ազնիւ զգացումները պիտի արծարծեն մեր սիրտերուն մէջ, ճշմարիտ հաւատքի և անձնութեան կրակը պիտի վառի հոն, տաք շունչ մը դնելով պաղտը, սառ կապած հոգիներու մէջ:

Եւ երախտապարտ պէտք է մնանք Հայաստանեայց Ս. Եկեղեցիին, որ դարերէ ի վեր իր կամարներուն տակ կը շարունակ վառ պահէ ազգային-կրօնական նուիրական յիշատակները, դոնոր շարականներով սուրբ օրհներգութիւններով յիշեցնել մեր նախնիքներու փառաւոր գործերը, հիանալի անձնագոհութիւնները(*): Ան էր որ վերջին երեսնամեայ բռնակալութեան չրջանին մէջ աներկիւղ կը պատուէր յիշատակն այս ճշմարտապէս դիւցազն հոգիներուն, ու մեծահասակ կը տօնէր զանոնք, մինչ եկեղեցիէն դուրս անոնց անունն իսկ արտասանել քաղաքական ոճիր մը կը նկատուէր պարզապէս:

ՋԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ:

(*) Վարդանանց Հիկզարքիի նախընթաց երեջարքին Հայոց Եկեղեցիին կը թոյլ յիշատակ Ս. Դեռնդեանց Բանակայից, ի մէջ որոց Յովսէփ Կաթողիկոս, Սահակ Եպիսկ. Ռշտունեաց եւն. որ նահատակուեցան Մեծ Պատերազմէն ետեք տարի վերջը: Նախորդ շարքում երկուշարքին ալ կը թուի յիշատակն Առմեակն զօրավարաց, ի մէջ որոց Առմ. Գեղեցի եւ Մանանիկ Ռշտունի, որ բազմաթիւ զօրերով նահատակուեցան մոլեկոծ Պարսիկներէն, Վարդանանց հուսկ մեծ պատերազմէն առաջ, որուն իրեն նախասօնն էր որ կասարեցին Առմեակն, իրենց վսեմ անձնագոհութեամբ:

ՄՈՌՅՈՒԱԾ ԷԶԵՐ

Տաճար, Ժողովրդային Կրթարարքի, բայց միեւնոյն ասեմ գրական շուրջ Հանդեսի իր ծրագրին գործարարութեան կը սկսի այս բուն իսկ, եւրոպական Հանդեսներու նման բանալով Մոռոուած էջերու բաժին մը, որու մէջ պիտի երեւան լաւագոյն կէտեր հայ ժաւանակակից գրականութեան, ընդհանրապէս օրարարներու մէջ ցրուած եւ ստուգիւ մոռցուած: Օրուան եկեղեցական տները, ազգային խնդիրները, գրական նորութիւնները՝ առիթ պիտի ընծայեն մեզի յոյս աշխարհի քերէշու Օսեանի, Տեմիրճիպաշեանի, Զերագի, Պերպերեանի, Դուրեաններու, Զօպանեանի, Արփիարեանի, եւ Ռուսահայ թէ Թրքահայ հանճարի ու մեծ աստուծոյ ներկայացուցիչներու գեղեցիկ արձակներն ու փերքուածները, որ հին քերքերու փոշոս կտրուան մէջ բաժնուած կը մնան: Ասոնց վերջիւմն անուշ յիշատակներ պիտի արթնցնեն հիմներուն՝ տարիքներուն արշին մէջ, եւ նորերուն առիթ պիտի սայ ճանցնալու եւ սիրելու իրենց յառաջընթացներն ի գրականութեան:

Շարքուն ազգային տներն՝ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ տնայարարութեան առիթ, այսօր կը բանակի այդ էջը՝ Ռուսահայ ցեղոյ բանաստեղծին՝ Դանաւ Բարիպայի հոյակապ ու ընդարձակ փերքուածութիւնը, որ մեր մանկութեան օրերուն հրահրած էր սիրտերը, եւ որ վստահ եմք թէ նոյն խորունկ ազդեցութիւնը պիտի ընեն երիտասարդ ընթերցողներու ալ վրայ:

ՔԱԶ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՄԱՀԸ

ՔԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ

1.

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ո՞վ լուսի՛ն լուսի՛ն, էլ քանի՞ էղպէս
Դալկացած, տըժգոյն, տըխուր երեւես,
Այդ Թըխպոտ ամպերն քեզ զարհուրեցրին,
Բոցոտ կայծակնե՞րն քեզ այլայլեցին,
Երկնից կամարի գեղը դու ես լոկ,
Աստեղց մէջ չըկայ քեզ նման ոչ ոք,
Մի՞թէ նախանձից Թափել ես գոյնըդ,
Չէ՛, ուրիշ զաղտնիք ունիս սրտումըդ:
Ասա՛ ինձ, լուսի՛ն, ասա՛ սրտաբաց,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքըդ այլայլած:
Երբ մենք սեւ օրուան ունինք կարեկից,
Ասում են, կէսն է պակտում մեր ցաւից,
Թշուառին Թշուառն է միշտ միտմար,
Մի՞րտեղ կը գտնես դու քանց իս Թշուառ,
Քեզ պէս մըտաստանջ, քեզ պէս անտերուշ,
Սրտումս զաղտնիք, բայց լուռ, անմըռունջ
Անցնում եմ օրերս, վա՛յ գլխուս տալով,

Մարդկանց մէջ ուրախ, միայնակ լալով.
Հալիս եմ, լալիս, արցունքս յորդոր
Յօղում, վազում են աչքիցս ամէն օր.
Չեն պակասում, չեն հառաչանք ինձնից,
Եւ այս սեւ օրուան չունիմ կարեկից.
Ամեն շնչաւոր, ունի մի ընկեր,
Մի միայն ինձնից պիտի պակսի սէր.
Եթէ դու էլ ես Թշուառ ինձ նման
Իմ քայքայ խօսքը կ'լինի քեզ դարման.
Սրտիդ խորհուրդը բա՛ց ինձ անկասկած,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքըդ այլայլած:

2.

Լուսինը դող դող ամպեր ճեղքելով,
Ինձ պատասխանեց լալագին ձայնով.
«Լսէ՛, Մուսային պարկեշտ որդեգիր,
(Թէ զըլիուս անցրին ես հետաքրքիր).
Շատ դար դէս ու դէն ունայն շրջելով,
Քեզ միայն զըտայ զգայուն հոգւով.
Բայց մինչեւ այսօր չի զըտայ ոչ ոք,
Որ իմ տըրուծեան տանէր քիչ մի հոգ.
Ոչ ոք չը խլեց դարուր իմ սրտից,
Շատ դար ինձ ոչ ոք չեղաւ կարեկից.
Շատ դար եմ պահել մայրագուծ խնամով
Օտարի զաղտնիք սրտիս մէջ. բայց ո՞վ
Մի օր բարձրացուց աչքերը երկին
Ու կարեկցարար հարցուց. «Ո՞վ լուսին,
Ինչո՞ւ ես տըխուր, գունամափ դիմօք,

Ի՞նչ ցաւ է սրտուդ, ի՞նչ վիշտ, ի՞նչ մորմոր: Գո՞հ եմ, գո՞հ քեզնից, պարկեշտ բանաստեղծ, ինձ պիտեցին քու խօսքերն անկեղծ, ինձ՝ որ համաշխարհ կարծում է անբան, Միայն քեզ համար կ'ըսացուի 'մ բերան, Գո՞ւ անուշ խօսքին եւ ես փոխարէն Կը պատմեմ, ինչ որ անցաւ իմ զլխէն. Դու այն կը պատմես բանիւ ներշնչակ, Յետնորդ կը հիւսեն քեզ դափնեայ պսակ. Թող քեզ խուժանը ատէ, անարգէ, Նաեւ այդ անուան քու շուք ու փառք է. Ի՞նչ սէր ես խնդրում մարդկութեան ցեղից, Ե՞րբ վարդ է քաղուել տատասկոտ տեղից, Սէրը նըմանից պէտք է պահանջիլ.

.....

3

ԼՈՒՍՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ի հոն եմ ծնել մեր հարկն առաջին
Որք յեւ Ազամայ զկառուած օրհնեցին:

Նախապետ

Դէ՛հ, լսէ՛: Մի օր կապուտակ կամարն
Ողջ ծածկել էին աստղեր անհամար,
Ես ալ հարսի պէս նոցա մէջ փռուած,
Հանդարտ գնում էի դէմքս քոյ առած:
Անցայ լողալով ծովը Պոնտոսի,
Անցայ քերելով կատարք Կաւկասի.
Տեսայ երեսս Գեղամայ ջրումը,
Զովացայ փոքր ինչ ձկնոտ Վանումը.
Լոյս տալով անցայ շատ դաշտեր, սարեր,
Ուր խոր լռութիւն, հանգիստ պատել էր.
Անխոջ մշակը հողի վրայ պառկած,
Զովութիւն խնդրում էր մարմնուն յոգնած,
Եզն ու զրաստը նոյնպէս վաստակած
Խալալ դաշտի մէջ էին տարածած:
Հայո՞ց աշխարհիկ, բերկրութեան տեղիք,
Հայո՞ց բընութիւն, ա՛խ, Հայ մանկութիւն,
Գեղօրէք, աւանք, դաշտք ու արտորայք,
Քաղա՛քք մարդաշատք, շէ՛նք ու վանորայք,
Ո՞ւր էք, ո՞ւր հիմի, ինչո՞ւ շուտ կորաք,
Ո՞վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռը վայրագ...
Այն գիշեր երնե՛կ էր Հայոց երկրին,
Աստղերն ալ երկնից նրան փառք տուին,
Ու ես անցնելով նորա վըրայից,
Զէի կշտանում վըրան նայելից:

4.

Ուղիղ չորս շաբաթ այն օրից անցան,
Կատարեցի ես դարձեալ մի շրջան.
Շտապով անցայ, քաղաքներ, գեղեր,
Լեռներ, ծովակներ ու շատ շատ տեղեր,
Կարօտով մըտայ Հայաստան աշխարհ:
Դարձեալ գիշեր էր, մըռայլ ու խաւար

Տիրել էր Հայոց առաւոյ դաշտերը.
Բայց, ա՛խ, ո՞ւր էին հունձք ու արտերը,
Ո՞ւր էր այն Հայոց անխոնջ գեղջուկը,
Ո՞ւր էր հաստավիզ նորա գոմշուկը,
Ո՞ւր էին խեղճի արօրն ու սամիք,
Կամ ո՞ւր մշակի պարտէզն ու այգիք:
Սեւ ծուխ էր պատել Հայոց երկնքին,
Գեղեր, քաղաքներ տուած կըրակին.
Անողորմ էրվում, տոչորվում էին,
Բոցեղէն լեզու քն համուռ ամպերին.
Դժոխք էր տեսիլն խեղճ Հայոց երկրին...
Բայց քեզ ո՞վ նիւթեց այդքան մեծ չարիք,
Երկնացօղ պարտէ՛զ, Հայոց աշխարհի՛կ,
Նախա՞նձ էր տիրել այդ մարդի սրտում,
Թէ օձ էր քնել նորա չար հոգում...
Այո՛, նախանձ էր, նախանձ դարեւոր,
Որ մարդուս սիրտը այրելով բոլոր,
Իսկ եւ իսկ սաստիկ, ահեղ ճայթմունքով
Դուրս ցայտում, վազում է մեծ հոսանքով,
Ինչպէս այն սարերն զրսից հանդարտիկ,
Որոց վրայ հալվում է՛ փափուկ ծընիկ,
Յանկարծ կայծակներ ծընում են ծոցից:
Քաղաքներ ամբողջ այրվում են բոցից.
Այդպէս նախանձի սերմունք սըպրդած
Յագիկրտ արքայի սրտի մէջ, յանկարծ,
Հարիւր հարիւրով պտուղներ ծնուցին,
Պրտուղք — արժանի գեհենի հընձին:

5.

Տեսայ Աւարայր սարսափած ահից,
Անթիւ գօրք նորա տիրել էր Պարսից.
Հայոց գնդիկն էլ համարձակ ու քաջ
Քրմօծալ դէմքով կանգնած էր առաջ:
Ծագեց արեւը. կատարք շողշողուն
Երեւան եկան Հայոց սարերուն,
Անօսր ամպերը կարմիր, ծիրանի
Գոյներով ներկած՝ զարդ էին երկնի.
Աւետիս կարգաց նորեկ արեւուն
Քաղցր տաղերով արտուտն արտերուն.
Տղմուտը հեռուանց անոյշ խոխոջով
Քերում էր ափերն փռուած վարդերով.
Հանդէս էր բնութեան. մի միայն մարդը
Այն օր չէր կազմում բնութեան զարդը.
Ուրիշ մտածմունք էր նորա հոգում,
Զար ոխ, չար նախանձ ու ատելութիւն:
Ճակատ ճակատի կանգնած անվեհեր,
Հայոց քաջորայր, Պարսից կտրիճներ,
Պարտաստ են չափել ուժերը բազկին,
Արեւմբ կշտացնել ծայրը նիզակին.
Սանձակոծ ծիւնք, անճոռնի փղղեր
Հողն էին փորում ոտով անհամբեր...
Թանկարծ բանակից դուրս եկաւ ՎԱՐԴԱՆ,
Ու ահեղ կռուին տուեց նա նշան:

6.

Յառաջ մասիս ինձ չըսե՛լ,
Շառաւիղի քաջին Հայկայ.
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Չագգասուր գործ ՎԱՐԴԱՆԱՅ:

Գաբրիել Պատկանեան

ՎԱՐԴԱՆ — գորավար իր ազգէն ընտրած,
Արեան դաշտի մէջ ՔԱՋ հանդիսացած,
Սըրտացաւ Հայոց դառը վիճակին,
Ոտք հանեց նոցա ընդդէմ գոռ Պարսկին:
Զը կարաց տանել նորա վեհ հոգին
Կրօնի հալածմունք սիրելի ազգին,
Թըրովն ու խաչով տուեց մեծ երդում—
Յաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում.
Եւ գորքը նոյնը երդմամբ կրկնեցին,
Մարմինքն ու հոգիքն ազգին զոհեցին:
Վերին ներշնչմամբ Վարդան քաջ գիտէր,
Որ օրհասական այն օր վերջինն էր.
Բայց նա ըստրկի կեանք վարել չընտրեց,
Ծննդով ազնիւ, ազնիւ մահ խընդրեց.
Զէր նա կուրացած նշոյլքով բաղդին,
Բայց չէր էլ զգուել օրերով կեանքին.
Նա քաջ էր մարմնով, հոգւով էլ վեհանձ,
Կիրքերը նորա բնաւ չէին անսանձ.
Առտընին կեանքում ծընող յազմագուծ,
Բանակի մէջը գորավար հըմուտ,
Պարիսպ ամրակուռ հայրենեաց համար,
Ամէն մի Հայի յոյսն ու մըխիթար.
Բայց իր թշնամեամբ . . . անեղ հալածիչ,
Դէմ ու դէմ կռուող, բայց ոչ նենգ պատրիշ.
Քանի որ ոտին թուր ունէր ձեռին,
Վարդանն էր նորա անեղ թշնամին.
Բայց երբ դնէր նա զէնքն իր գետին
Վարդանն էր նորա պաշտպան առաջին .

.
.
.
.

7.

Թընդաց սրտերը արի Հայերուն.
Սանձերը թողած նըժոյգ ձիերուն,
Աջ ձեռքին թըրեր, ձախերին վահան —
Քաջ քաջ վազ տուին Պարսից յանդիման:
Դրոհն էր անեղ սըրտոտ Հայերուն,
Գետերի նման թափեցին արիւն.
Մահը անփախուստ էր նոցա աչքին,
Խիստ թանգ ծախեցին մահերը Պարսկին:
Երկար չըտեւեց այն անգամ կռիւը
Շատ շուտ քիչացաւ Հայերու թիւը,
Մընացողը քաջաց նախանձ թերելով,
Ընկան կոտորած Պարսից թըրերով.
Մընաց լոկ Վարդան իր բուռ քաջոց հետ,
Նորա առաջ գունդը Պարսից անհեթեթ:

Զը սարսեց նորա վեհանձն հոգին,
Տեսնելով անշուշտ վտանգ առաջին,
Սըրեց պիտերը, նայեց աջ ու ձախ,
Իր բուռ քաջերուն ասաց դէմ ծիծաղ.
«Տղե՛րք, անա մեզ մի կարճ ճանապարհ
«Որով այս երկրից կ'երթանք նոր աշխարհ,
«Ուր մեր քաջ նախնիք կան մեզ անհամբեր
«Փառաց պըսակով շատ ու շատ դարեր.
«Տա՛նք վերջին բարեւն աշխարհին Հայոց,
«Որ սընուց զընով մեզ տղայ տիոց.
«Առանց հայրենեաց մեզ մուծ է աշխարհ,
«Հայաստանն էր մեր միակ մըխիթար.
«Կորաւ Հայաստանն, էլ ի՞նչ յոյս մընաց,
«Մեր կեանքն ի՞նչ է, թէ ոչ սուգ ու լաց.
«Այո՛, տանն ունինք ծնողք, ընտանիք,
«Թո՛ղ կորչին, երբ որ կորաւ հայրենիք.
«Դո՛նէ մեր յետնորդը կ'ասեն մեզ համար,
«Արցունք թափելով աչքից անդադար,
«Երանի՛ էր ձեզ, ո՛վ որդիք փառաց,
«Որ դուք չտեսար կորուստն հայրենեաց.
«Զեր կեանքն էր ազնիւ՝ ազնիւ մահ առիք,
«Զեզմով կը պանծայ յաւէտ հայրենիք,
«Զեր կեանքն կը լինի յետնոց օրինակ
«Ինչպէս մեռնիլը ձեզնից սորվեցանք.
«Ինչ որ ունէիք՝ Ազգին արիք զոհ,
«Ազգն յաւիտեան կը մնայ ձեզ զոհ.
«Քընից յառնելիս, կամ քուն մըտնելիս,
«Միշտ ձեզ կը յիշենք մենք աղօթելիս.
«Մեր անմեղ անձանց տըխուր օրերով
«Զեր զխուռ անցքը կը պատմենք երգով.
«Զեր անկման տեղը կրօնասէր մարդիկ
«Կը դարձնեն անշուշտ աղօթոյ տեղիք,
«Զեր մարմինն ամէն մի հայի համար
«Կը դառնան մասունք սըրոց փրկարար.
«Հանգէ՛ք, դիւցազունք, հանգէ՛ք յաւիտեան
«Զեզ միշտ կը յիշէ ձեր Մայր-Հայաստան»:
Ասաց ու լռեց: Երկու աչքից
Յօղացին արցունք ինչպէս ցօղ երկնից.
Ուժգին ախ քաշեց անվեհեր սրտէն,
Բայց այդ ախը չէր թշնամու անէն:

8.

Բայց ինչո՞ւ լացեց այդ արի մարդը,
Որին անձանօթ էր անն ու դարտը.
Դուցէ՛ թէ յիշեց նա այդ ըրպէին
Տանը անպաշտպան թողած ընտանին,
Որ շուտով կ'ընկնի ձեռքը թշնամուն,
Այդ ազատ կեանքէն կ'երթան գերութիւն,
Զեռակապ, քաղցած ու հազար չարիք
Անմեղ տանելով խեղճ Հայոց կնանիք,
Պարսից սրերուն պիտի հարձք լինին,
Կամ կոյր հետեւող Զրդաշտի կրօնին:
Կ'անցնին սեւ օրեր, կ'անցնին եւ տարիք,
Այդ գեղջ կեանքումը կը մոռնան չարիք
Իրանց հալածչաց, կը մոռնան Հային,
Որք նոցա սիրոյն այդքան ցաւ տարին.

Այն թռչնուն նման, որ ե՛ւ վանդակում,
Անտառէն զրկած՝ գտաւ խնդուկուն,
Անուշ երգելով, հօրերէն սորված,
Ունկը փաղաքշեց իր չար թշնամեաց . . .
Գուցէ նա լացեց Հայի վիճակին,
Անկու՛մը գահին, կորուստը թագին,
Որ հազար ու բիւր կրելով ցուեր,
Անկործան պահեց նոցա շատ դարեր.
Ինչո՞ւ . . . որ մի օր յիմարի կամքից
Անդա՛րծ, զրկուի հօրական փառքից:
Ա՛խ, դառն էր նորա հսկայի սրտին
Տեսնել յաղթանակ Պարսից ռիւերիմ:

9.

Կարծիք կայ, որ հոգին
ունի մի գաղտնի զօրութիւն իւր
ապագայ վիճակը նախագայում:

Սեւ սեւ պատկերներ՝ սեւ քողի նման
Վերդոված մըտքին եկան յանդիման.
Տեսաւ Հայաստան ոտնակոխ արած,
Քաղաքը մարդաշատ իսպառ ուերած.
Երբեմն բնակիչք տէր շատ ազգերի,
Այժմ կրօնամոլ Պարսկին են գերի.
Փակած են դռներն նոցա ժաւերուն,
Անդ էլ չի հնչում սրբոց ալելուին,
Եւ նուիրական նոցա սուրբ տեղիք
Էլ չեն այցելում կրօնասէր մարդիկ.
Այրուծին Հայոց, այն քաջ այրուծին —
Ո՛չ Հային պաշտպան կ'լինի այլ Պարսկին.
Եւ զանձք լիւններուն, բերք առատ երկրին
Ողջ պիտի լսի՜ն անհաշտ թշնամին:
Հայը անճարակ՝ կը մոռնայ ազգը,
Կրօնն, ե՛ւ լեզուն, եւ հօրանց փառքը,
Հայկ, Արամ, Տիգրան եւ այլ դիւցազունք,
Կ'երեւին նոցա պատիր շաղկապուներ.
Եւ կամ՝ լսելով մեծ գործք ներսիսին
Գուցէ զաւակունք նոցա կասկածին.
Հըրաջեայ, Զարմայր եւ Վահագն արին
Երբէք չեն անցնիլ նոցա մըտքերին:

10.

Նա լուռ էր. բայց այդ լուռութիւն խորին
Նման էր անհուն ու անյորր ծովին,
Որ մեղմ ծըփալով, նաւաստեաց սրտում
Յաջորդակ ճամբու յոյսեր է ծընում:
Բայց վա՛յ է խեղճիկ անվործ նաւորդաց,
Թէ հասու չեղան նորա պատրանաց.
Կը վերցնէ ալիք մինչեւ ամպերը,
Խաղալիկ կը լինեն նորան նաւերը,
Կու՛լ կ'երթան անյազ փրփրած ծովին,
Ո՞վ դէմ կը կենայ կատաղած հովին . . .
«Քաջի՛ր, ասաց նա, ինչո՞ւ էր տըխուր,
«Յոգնած եմ ծեռներդ, Թըրե՛րդ չեն սուր.
«Նո՛ր է մեզ համար նիզակ խաղացնել,
«Հայոց թշնամու կեանքը կարճացնել:

«Սարսեցա՞ք Պարսկի անձիւ զօրքերից, —
«Մի Հայը քաջ է նոցա հարիւրից.
«Յիշեցէ՛ք Հայկին որ բուռ քաջերով
«Դէմ կեցաւ Բէլին, հոգին անխնով
«Ջարդեց, կործանեց. մընացորդը ցըրիւ
«Եղան Հայերից, ինչպէս չոր խռիւ:
«Մահի՛ց վախեցար. ամօ՛ւ է Հային
«Իր ազատ կեանքը փոխել ըստրկին.
«Մա՛հ, մա՛հ, ե՛կ շուտով, սեւցո՛ւր իմ կեանքը,
«Ինչպէս սեւացաւ Հայերու փառքը.
«Դէ՛հ, վերջին անգամ հօրանց տաղերով
«Կուռենք ու մեռնենք Պարսից թըրերով»:

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՐԳՈՒՄ ԵՆ

Զինուոր հի Հայոց ազգին մըսերիմ,
Երբ Հայաստան փախանդ արեց թշնամին.
Պինդ պինդ ցաւեց սիրտ արի Հայերուն,
Այն օր նոսա քափել ծռիւն գեւ արիւն.
Շատ շատ փաշտ ընկան առիթ ու անդից,
Ես էլ ընկայ թշնամիի սուր նեւից.
Իմ մարմինը դաշտի միջին ե ընկած,
Քրիստոնէի սուրբ օրհնով չե՛ր քաղած.
Դուն մի մնար աջիդ արցունք օրն ի բուն
Սիրականիդ, իմ սիրական, մըսի՛ր փուն,¹
Առտուն կուգայ չարագուշակ գուժկանը,
Սուգ, ողբ, կսկիծ նա կը նիւթ իմ օսնը.
Երբոր լրսես վաղածաւիկ իմ մահը,
Ա՛ն երկու թի ու երկաթ սուր քառը,
Ա՛ն փու նեւը մի սպիտակ մեծ պատան,
Փորէ խորին ինձի համար գերեզման.
Գերեզմանիս վրայ յըսնի վարդենին,
Վարդը քացուի, աջի՛ր գրաւե ամենին,
Սոխակին էլ թո՛ղ գրաւե նա հոգին,
Քաղցր տաղեր թող ներշնչե սոխակին,
Թող սոխակը անցնիս պատմե անենուն,
Թող լըսողը ողորմիս օայ իմ հոգուն:

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

(Այս ֆերբուածին մաս կը կազմէ «Հիմն»
էլ յռենք), փաջածանօք գեղեցիկ երգը, ո-
րուն կրկնութիւնն աւելորդ կը նկատենք
այստեղ:)

11.

Մօտ էր արեւը իր մօրը մըտին,
Խիտ խիտ նետում էր ծածանչն իր յետին,
Տեսնողը կ'ասէր՝ այս անգամ արեւն
Տալիս էր երկրին իր վերջին քառն.
Վերջինն էր, այո՛, բայց ոչ ամենուն,
Վերջինն էր այն խեղճ, կըտրիճ Հայերուն.
Նորա շողի հետ նոցա վեհ հոգին
Պիտի սըլանար դէպ պայծառ երկին:

Դարձեալ զրոհ տուին Հայք ուժգին ուժգին,
Թնդացին շարքերն թշնամեաց զօրքին,
Ապշած մընացին Պարսիկք տեղերը,
Թովիչ կարծեցին Հայոց խեղճերը:
Մեծ էր կոտորածն Հայոց քաջերուն,
Ցոյց տուին Պարսից՝ ուժը ձեռնբուն,
Աւարայր դարձաւ արեան ճապաղիք,
Դաշտը գէշերով լըցուցին Պարսիկք:
Մարդ, փիղ, ծի, կառք, զէնք մէկ մէկով էին,
Ո՞վ կը խիզախէր դէմ կենալ Հային:
Ինչպէս լեռ ալիք ծովին՝ անարգել
Ուզում են քարի եղերք խորտակել,
Վազում են առաջ անհոյ գողալով,
Դըժոխքի վայել երգ յօրինելով,
Ժէշուտ ափերին գալիս են, հասնում,
Խըփում են, ի գո՛ւր ու յետ են վազում,
Այդպէս եւ Պարսից ճիգն էր ունայն,
Երբ նոցա առաջ պինդ կանգնած էր Հայն:
Բայց չի կար արգելք խիզախ, քաջ Հային,
Ո՛չ թուր եւ ո՛չ նետ, ոչ շարք փղերին:
Նա որդեկորոյս առիւծի նման
Արգիլք չէր տեսնում աչաց յանդիման:
Բլրածեւ փղեր գորում էր գետին,
Մըժեղ էր թըւում նորան այրումին,
Այն քաջ այրումին, սրոց որ Հելլեն
Ծակամուտ եղաւ մի միայն աճէն:

12.

Օրն էր տարածում, մարտիկը դադարած,
Փողը հընչեցին մարտին կատարած:
Մուկը տարածուեց. աստեղք ցլացին,
Երկնից ցօլն իջաւ արնալից գետին:
Մնասէր թռչունք ծայներով խըւպոտ
Դուշակում էին մարդկանց սուգ ու բոծ:
Յետ դարձան Պարսիկք իրանց բանակը,
Նորից նոր սըրել սուրն ու դանակը,
Որ այգուց կանուխ, լոյսը չի ծագած
Վըրայ յարձակունին Հայոց՝ կատաղած:
Բայց այլ տեսարան էր Հայոց միջին,
Վըրոված, տըխուր էր նոցա հոգին:
Ոչինչ չէր լսվում, թէ ոչ սուգ ու լաց,
Մեծ կորուստ արին, կորուստն էր անդարձ —
Ոչ որ չը գիտէ: Տըխուր ու տրտում
Ամեն տեղ նորան են Հայք պըտրտում,
Հոգեոց հանելով, վա՛խ գլխուն տալով,
Աչքերից աղի արտսուրք թափելով:
Աւարայր դաշտը տալն ու վրայ արին,
Աւաղ, յայտ չեկաւ Դիւցազն արին:
Պինդ պինդ ծայն տուին. «Ո՛ւր ես, ո՛ւր Վարդան»,
Արձագանգն կրկնեց Վարդան ու Վարդան:
Որբերի աչքին քունը չի մօտում,
Բունը ի՞նչ ափովանք թէ դարտ կայ սրտում,
Թէ լինի գիշերն մեզ քիչ մըլիկար,
Առաւօտն, աւաղ, կը լինի վատնար:
Արթուն մընացին, չի մըտան բանակ,
Մինչեւ որ խօսե՛ց երեք հեղ խօսնակ:

13.

Յանկարծ լըսեցի ծիուն տրոփ հեռունց,
«Այս ո՞վ է, տըղե՛րք, ասին Հայք միմիանց,
Դիշերուայ ժամին ուզեց թշնամին
Վրէժխնդիր լինել ցորիկուայ անցքին:»
Բայց չէ՛, վա՛յ նոցա, վատնար տեսարան
Ապշած աչքերուն եկաւ յանդիման,
Չէր արթուն Հայոց անկոչ այցելուն
Սարսած թշնամին տարածում պահուն:
Վարդանն էր, որին յուսահատ, տրտում,
Որբացած Հայերն էին պըտրտում,
Վարդանն էր . . . բայց ի՛նչ վիճակի հասած,
Արիւնաթաթաւ, արտին նետ ցըցուած,
Աչքերը մընած, երեսը տըժգոյն,
Վէրքերը ծոր ծոր կանում էր արին:
Երկու մանկաւիկ բըռնած կըռներից
Կիսամահ քաջին իջուցին ծից:
Բայց այն սուրբ աչքերն, դէմքը հրաշալի
Չէին կըրում հետք մահուն երկիւղի:
Նորա թուլացած բազկից այն ժամին
Չար մահ կըստանար նորա թշնամին,
Թէ որ խիզախէր գալ նորա առաջ: —
Այսպէս մօտ մահուան նա միշտ մնաց քաջ:
«Տըղե՛րք, ասաց նա ծայնով դողողուն,
«Չեզ հետ զրկախաւն, ձեզ համարյոյ տալի՛ս,
«Հանգիստ աւանդել այս շունչը վերջիս:
«Ժամ է ժամ թողնել, աւեր Հայաստան,
«Ուր քար չի մընաց պինդ քարի վըրան,
«Մենք էլ հետեւող նախնեաց աւանդին,
«Ստրուկ չենք լինիլ երբէք օտարին,
«Քանց հաշուի, մաշուի թըշնամու լուծով:
«(Իմ հինգ տարեկան հասակէս ի վեր
«Այսպէս տալիս էր ծնունդ իմ պատուէր):
«Յաւում է սիրտս, ոչ նետի խոցից
«Յաւում է որ շուտ գնում եմ ձեզնից,
«Որ չեմ կարենում ձեզ հետ միասին
«Արեան դաշտի մէջ փչել իմ հոգին:
«Վա՛յ թէ դուք մենակ վըհափր ահից,
«Դողար, սարսափիք վերահաս մահից,
«Թունն ու ասպարը մի կողմը զլոռէք,
«Պարսկին կամաւոր ձեզ գերել թողնէք:
«Ա՛խ, քա՛ջ իմացէք, ես, թէեւ թաղած,
«Պիտի վեր կենամ հողից կատաղած,
«Նորից նոր առնում ձեռքս թուր ու տէգ
«Ու ձեզ անողորմ խողխողիմ մէկ մէկ:
«Անէ՛ծք եմ թողում՝ ես այն վստ Հային,
«Որ ո՛չ ոք, այլ սէր ցոյց տայ գող Պարսկին:
«Այդ անհաշտ ոխը հիմկուց ցեղէ ցեղ
«Պիտի տարածեն Հայքն ամէն տեղ:
«Թող կորչին ազգեր երկրի երեսից,
«Հայը միշտ անհաշտ պիտի մնայ Պարսից:
«Ստուերս երբէք չի մընալ անդորր,
«Այս թշուառ դաշտում կը ջրջի մոլոր,
«Մինչեւ այն ժամը, ժամ օրհատական,
«Երբ Պարսիկն կամ Հայը կը լինի կործան,
«Արեան դաշտի մէջ մարտելով իրար:

«Լոկ այն ժամանակ կ'առնում ես դադար :
«Դէ՛հ, մ'նաք բարեւ : Տէ՛ր, ա՛ռ իմ հոգին .
«Ազատ կեանք կամ մահ ազնիւ տո՛ւր Հային» :
Լըռեց, ու իսկոյն նետը մահաբեր
Հանեց աներկիւղ կողից կարեւելէր :

14.

Առ ժամ մի որբիկ տարաբաղդ Հայերն
Ապշած, զարհուրած մընացին տեղերն,
Զիմացան՝ տեսիլք է այս, Թէ՛ անուրջ :
Մեռած դիւցազին խուռն կանգնած շուրջ՝
Ո՛չ լալիս էին, ո՛չ սգալ կարում,
Իրանց աչքերին չէին հաւատում :
Խոնչպէս հաւատան իրանց աչքերին,
Երէկ չէ՞ր, որ պինդ կար հըսկայ կաղնին,
Որ քանի դարեր հարուածը հողմին
Զեփիւռ էր կարծում փըշած մեղմագին .
Այսօր միշտ բեկ ու թաւազըլոր
Կար նոցա առաջ. աչքերով մոլոր
Տեսնում են քաջին գետին տարածած,
Ջրղոտ ձեռները ցամքած, կարկամած,
Կէս խուփ աչքերը չունին առաջուան
Ո՛չ բոցը, փայլը՝ ջուխտ աստեղից նման.
Դէմքը զուռնափ, գիծքը անմեկին,
Ո՛չ ոխի նշան, ո՛չ սիրոյ — ունին :
Տեսած կա՞ս մէկ օր, երբ բոցոտ շանթը
Երկնուց ցած իջնէ մինչ խաղաղ դաշտը,
Ահող որոտմամբ, փայլ արծակելով
Արթուն հովիւին զարնէ, տայ գետնով.
Անմեղ զառնուկներն որբիկ մ'նացած,
Ապաստան չունին, անտէր են թողած .
Ահից վազում են թուլիկ ոտերով,
Հովուին սուգ կարողում տըխուր ձէներով.
Ո՞վ է նոցա տէրն, ո՞վ խնամողը,
(Որբերի սփոփիչն է լոկ սեւ հողը)
Մա՛հ, մա՛հ խնդրեցին Հայերն միաբան,
Քաջից յետ չի կար էլ յոյս փրկութեան :

15.

Խուռն կան Հայերը մի փոսի առաջ,
Սրտից անդադար հանում են թաւանչ,
Դառն արտասուքը նոցա աչքերին
Հոսում են առատ ամալի գետնին.
Դասք քահանայից դաշտումը չի կան,
Որ սուրբ աղօթքով հողին հողը տան.
Կնդրուկ ու զըմուռս նախնեաց աւանդով,
Այդ անշուք թաղման չի խընկում ոչով.
Լալական կանայք կուրծքին ծեծելով,
Ողբի չեն շարժում դառն հեծելով :
Լուռ են Հայերը աչքերը պղտոր,
Դէմքերը անշարժ, մըտքերը մոլոր,
Հազիւ հազ նոցա շըրթունքը դեղնած
Շարժելով տալիս են նըշան կենաց :
Արդեօք աղօթք է, որ նորա կարողում,
Թէ՛ արեան վրիժու տալիս են երդում
Իրանց Դիւցազնի դիակի առաջ,
Որին խոստացան մեռնիլ քաջաբաջ.
Կարգէ կարգ, լըռիկ, մինը յետ միւսին

Վերջին համարըրը տուին Դիւցազնին.
Եւ երբ որ փայլեց առաջին շողը,
Քաջին մարմինը կլլեց սեւ հողը :

16.

Կորաւ Դիւցազնը, կորաւ Հայաստան,
Զի Հայոց միակ յոյսն էր Քաջ Վարդան .
Թշուառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետեւ չը սիրեց ոչով.
Դարք ետեւ ետեւ գնացին, անցան,
Յիշատակ Քաջին իւրքը մոռացան,
Հեշտութեան կենաց եւ զանծի մոլար
Ազնիւ նպատակն մոռացան ի սպառ.
Իրանց սրբազան տեղիք պարծանաց
Թողին, մատնեցին խուժադուժ ազգաց,
Եւ հողը, գնած գնով սուրբ արեան
Հարանց՝ արին չար թշնամիք կոխան.
Մոռացան վրէժն այն նուիրական,
Որ աւանդել էր նոցա Քաջ Վարդան.
Եւ աստիւծեան փոխանակ՝ Պարսկին
Յոյց տուին միշտ սէր ու յարգանք խորին.
Ծըռեցին վիզերն Պարսից լըծի տակ,
Դիւրութեամբ դարձան հըլու հպատակ :
Ա՛խ, արդարացաւ տեսիլն Վարդանին,
Որ նախատեսաւ անկումն ազգին :
Հայը հետամուտ չէր ազնիւ մահուն,
Որ յետնոց թողնէր պանծալի անուն.
Վասակաց թիւը շատցաւ դարէ դար,
Զուտ ազնիւ հոգիք չերեւցան ի սպառ.
Գործիք եղեռան դարձան օտարաց,
Ոչ որ դարմանիչ չէր ազգին չարեաց . . .
Թո՛ղ լռե՛մ, լռե՛մ, ազնիւ պատանի,
Այս թշուառ անցքէն միտքս սասանի :
Քանի կը յիշեմ՝ սիրտս խոցոտի,
Ու ճըմլած հոգիս վրիժու բոցոտի :
Մոլեկրօն Պարսը կայ մինչեւ այսօր,
Ունի թագ ու զահ շըքեղ, փառաւոր .
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքք բարեշէն, տէր է շատ ազգաց.
Իսկ Հայը . . . վա՛յ նորա դառը օրերուն,
Ի՞նչ ունի, քայց թէ լոկ եւեթ անուն,
Որը եւ յաճախ ինքը ամօթից
Ջրզուած մերժում է իրա վրայից :»

17.

Վ Ե Ր Զ Ա Ր Ա Ն

Լըռեց : Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու Լուսինն աչքէս խըլեցին.
Մընացի մի՛նակ՝ հոգիս վըրդոված,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած :
Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս :
Ա՛խ, ցոլա՛, փայլե՛ տիւրադէմ Լուսին,
Գուցէ՛ քու փայլից փայլ տաս եւ Հային,
Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի զահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը — աշխարհն Հայաստան :

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԵՏՔՐ

ՀԱՅՈՒՆ ՀԱՄԱՐ

Լրագրութիւնը աշխարհիս մեծագոյն բնական պէտքերէն մէկն է: Եւ գացէք մինչեւ մեծ Առաքեալին՝ Պօղոսի օրերը, և միեւնոյն տենչանքն է որ կը նշմարէք, երբ Աթինացիներուն համար կ'ըսուի թէ իրենց միակ զբաղումը ըրած էին պատմել կամ լսել նոր բան մը: Այդ տենչանքը, թէպէտ աւելի զօրաւոր եղած ըլլայ Աթինացւոց մէջ, անոնց սահմանափակուած չէ:

Համագգային, համաշխարհային, ամբողջ մարդկութեան վերաբերող տենչ մըն է ան: Պատմուած է թէ տպագրութեան գիւտէն առաջ սովորութիւն կար օրուան լուրերը հաւաքել, նամակներու մէջ դնել զանոնք ձեռագրով, և զրկել ազնուապետութեան: Քիչ վերջը, տպագրութեան գիւտը վրայ հասաւ, վերջ տուաւ մարդկային տենչանքը յագեցնելու տաժանելի միջոցներուն, և այժմ լրագիր կը հրատարակուի գրեթէ ամէն երկրի մէջ:

Անթիստեի իրողութիւն մըն է որ լրագրութիւնը անագին ուժ մըն է այսօր աշխարհի ամէն կողմերուն մէջ: Բարլայլ շատ իրաւամբ կ'ըսէ լրագիրներու և չաբաթաթերթերու համար. «Անոնք ժողովուրդին կը քարոզեն ամէն օր կամ ամէն շաբաթ. մինչև իսկ թագաւորներուն խրատ կուտան, խաղաղութեան ու պատերազմի համար խորհուրդ կուտան այնպիսի հեղինակութեամբ մը որ միայն առաջին բարեկարգիչներուն կը վերաբերէր կամ Պապերու վաղեմի դասակարգին, բարոյական պարսաւի պատիժը դնելով անոնց վրայ, տալով բարոյական քաջալերութիւն, միտքաբութիւն և չիտութիւն»: Յիշուի լրագրութիւնն այսօր հակադասական զօրութիւն մը ունի աշխարհի վրայ. բայց կարելի չէ ժրխտել որ նաև անկեղ և վտանգալից ուժ մըն է ան: Երբ կ'ընթացէր, տպագրութեան գիւտին հեղինակը, Ս. Ապէրլըսկօթի միաստանի մէկ խցիկին մէջ կ'աշխատէր,

կ'ըսէ մեզի թէ երկու ձայներ իրենց կը խօսէին: Մէկը կ'ըսէր իրեն որ ես կենաց այդ աշխատութենէն. կը պատմէր անոր այն զօրութեան վրայ, զոր իր հնարագիտութիւնը պիտի դնէր չար մարդոց ձեռքը՝ ծառայելու իրենց ամբարշտութեանը, կը պատմէր անոր թէ մարդիկ ինչպէս պիտի սրբապղծեն այն արուեստը զոր ինք ստեղծած էր, և թէ ինչպէս ապագայ սերունդը պատճառ պիտի ունենար անիծելու այն մարդը որ զայն աշխարհին տուաւ: Կիւթէնպէրկ այնքան խորապէս ազդուեցաւ իր լսածէն, որ մուրճ մը առաւ և ջախջախեց այն տպագրական տառերը զորս ինք այնքան աշխատութեամբ իրարու քով դրեր էր: Այս իր աւերումի գործը, սակայն, արգիլուեցաւ ուրիշ ձայնով մը՝ անուշ և երաժշտական, որ հիմա իր ակամջին կը հասնէր, ըսելով անոր որ իր գործը առաջ տանի և հրճուի անով. թէ ամէն բարի բան կրնայ չարի ալ պատճառ ըլլալ, սակայն Աստուած ի վերջոյ պիտի օրհնէ ինչ որ ուղիղ է: Այս անուշ և երաժշտական ձայնը, մասնաւորապէս, պէտք է հասնի աւստինց որոնք կրօնական և բարոյական թերթեր հրատարակելու խիստ օգտակար գործին ձեռնարկած են: Ինչ երանուէտ գործ, ինչ փառայեղ ձեռնարկ. առնել այս աշխարհաշարժ ուժը և զայն ծառայեցնել կրօնի, Աւետարանի մեծափառ փաստին, գործածել զայն իբր Արքիմեդէսեան նոր լծակ մը, վեր բարձրացնելու ոչ թէ ֆիզիքական երկրագունտը, այլ հոգեկան աշխարհը որ աւելի վերխարի ուժի մը կը կարօտի:

Թո՛ղ Աւետարանին արծաթ շեփորը բեմին վրայ որոտալից գոռայ, զարթուեցանելու աշխարհը՝ իր խորունկ թմբիրէն, թո՛ղ ամէն Քրիստոնեայ իր կիանքին մէջ ոսկեճաճանչ չողիւններով փայլեցնէ Աւետարանի վսեմ ճշմարտութիւնները, բայց թո՛ղ նաև բրիտանեայ մամուլը, իր թէ հովերուն թեւին վրայ, Աւետարանի հնչեղ աշխարհածաւալ ազդեցութիւնը տանի երկրիս անմէն կողմերը, աշխարհի ամէն միջին, ծածուկ անկիւնները:

Աւետարանի ազդեցութիւնը, ինչպէս

ամէն ուրիշ միջոցով, նոյնպէս մասնուի ու մասնաւորապէս կրօնական թերթերու միջոցով պարտական ենք ծաւալել: Պէտք է հաւատք ունենանք այդ օրրազան երկնային ազդեցութեան վրայ: Ապշեցուցիչ զօրութիւն մըն է ան, մեր երեւակայածէն շատ աւելի հզօր: Ան լսին է երկնից ցօղին պէս, բայց նաեւ նոյնքան տոգորող է: Անձայն, լուռ դեղեցկութեամբ կը սահի կ'երթայ ծաւալելու իր կենսական ջուրերը, նման հեղասահ գետի մը: Մարդիկ աղմկալից զօրութիւններու պաշտող են ընդհանրապէս: Բայց եղելութիւնն ալ այս է որ, բոլոր մեծ զօրութիւնները լուռ են. ճշմարիտ ուժը հանդարտ է: Ռամիկ գաղափար է այն թէ որոտումը և շանթերը ամենազօր ոյժերն են, որովհետեւ ամէնէն աւելի լսելի են: Տիեզերքը կառավարող ծանրութեան զօրութիւնը, որ անսեսանելի է անլսելի է, արեւը և աստղերը իրարու հետ կը կապէ և կը դնէ զանոնք ամենաշքեղ ներդաշնակութեան մը մէջ: Շանթէն անհունապէս աւելի զօրեղ է, բայց անոր ձայնը լսած էք երբէք: Տեսէք լոյսը՝ որ կուգայ 95,000,000 միլիոն հեռաւորութենէ, աղմուկ չունի բնաւ, և անանկ հեղաբար և մեղմիկ կ'իջնէ որ մանկիկի մը աչքը չի փնասեր, բայց անոր զօրութեամբն է որ բոլոր երկիրը կը ծաղկի, կը բողբոջի ու կը սլուռ. զարեւուի: Ասանկ զօրութեանց կարգէն է կրօնի ճշմարտութեանց զօրութիւնը. աննիւթ, անսեսանելի և անլսելի, բայց ազգեր կը բողբոջեցնէ ու բոլոր աշխարհ կը լեցնէ իր ոսկի պտուղներով: Ինչո՞ւ մասուլը ծառայութիւն չընէ այսօրինակ զօրութեան մը: Ծառայման համար, ինչո՞ւ կրօնաթերթեր, ի՞նչ ձեւով որ ըլլան անոնք, հզօր գործիքներ չըլլան Քրիստոսի Եկեղեցիին ձեռքին մէջ, ազգերու վերածնունդը և մեծութիւնը պատճառող ամենամեծ ճշմարտութիւնները բոլոր աշխարհին հուշակելու:

Գիտենք որ կան անանկներ որ շատ թեթեւ ու հարեւանցի մտածումներով կը նային կրօնքին կամ քրիստոնէութեան վրայ: Վճիռներ կ'արձակեն, եզրակացութիւններու կը յանգնին, որոնք հասուն, չըջահա-

յեացէ և իմաստուն մտքի գործ չեն: Ասոնցմէ ոմանք չեն քաշուիր հոշակելու թէ կրօնքը, Աւետարանը և Քրիստոնէութիւնը հինցած, անզօր և անօգուտ բաներ են: Ասոնց վրայ մտածած ատենս կը յիշեմ պատմութիւն մը որ բաւական ատենէն ի վեր կարդացած եմ: Ամերիկայի մէջ դեռ գերութիւնը չջնջուած, գիշեր մը պարոն մը իր գերիներէն ծերուկ սեւամորթ մը հետն առած, նաւակով պտոյտի ելաւ: Քիչ մը վերջը, սակայն, պարոնին քունը եկաւ, և մտածեց թէ գէշ չըլլար եթէ քիչ մը քնանայ: Բայց քնանալէ առաջ, ծերուկ գերիին մատնանի ընելով մասնաւոր աստղ մը, ըսաւ անոր. «Ես պիտի քնանամ, դուն շարունակէ թիավարել, բայց միշտ ցոյց տուած աստղիս ուղղութեամբ», և խորունկ քունի մէջ ընկաւ մեցաւ:

Գանք որ մեր ծերուկ սեւամորթը առնէ մը իր տիրոջ ցուցուցած ուղղութեամբ թիավարելէ վերջ, քունի թմբիրը իր վրայ ալ եկաւ: Գլուխն սկսաւ վար կախուիլ, և թիավարութիւնն ալ հետզհետէ սկարացաւ, մինչեւ որ վերջապէս ձախ ձեռքը բոլորովին դադարեցուց թիավարութիւնը, աջը սակայն տկար ու սոսկ մեքենաբար կը թիավարէր. անանկ որ նաւակը առանկ մէկ կողմէն թիավարուելով՝ գլուխը դարձուց իր ետեւի կողմը, և անա յանկարծ խելքը գլուխը գալով խեղճ ծերուկին, կը սկսի չորս գլին նայիլ իր աստղը փնտռելու: Բայց որովհետեւ նաւակը բոլորովին հակառակ կողմը դարձած էր, մարդուկը ի զուր կը փնտռէր աստղը իր առջեւի կողմը, և անա յանկարծ աչքին զարկաւ աստղը՝ հեռուն, նաւակին ետեւի կողմը: Գերին չփոթած գոչեց. «Տէր իմ, տէր իմ, արթնցիր և ըսէ ինձի թէ հիմա ի՞նչ ուղղութեամբ թիավարելու եմ, քանզի թիավարելով, թիավարելով անցիր ենք, ետեւիս թողուցեր ենք այն քու ցոյց տուած աստղը»:

Այս ծերուկ սեւամորթին չէն նմանիք անոնք ալ որոնք կը կարծեն թէ իրենք շատ առաջ գացեր են հիմայ, թիավարելով, թիավարելով շատոնց անցեր են Բեթլեհէմի շողջողուն աստղը, ու այժմ իրենց

շառաջդիմական ընթացքին մէջ, նոր ուղ-
ղութիւն, նոր շառաջնորդ կը փնտռեն։
Իրաւունք չունինք արդեօք ըսելու անոնց.
«Բարեկամներ, կ'աճապարէք ձեր եզրա-
կացութեանց մէջ, դուք ձեր մարդկային
թիւովարութեամբ այնքան անկարող էք
անցնելու և ձեր ետեւ թողելու Բեթլեհէմի
աստղը, Աւետարանի ճշմարտութեան շող-
շողուն փառքը, որչափ այն ծերունի սե-
ւամորթը կարող էր անջրպետին մէջ փայ-
լող հեռաւոր աստղը անցնիլ իր թմրած
ու տկար ձեռքերով երկրի ջուրերուն
վրայ թխալարելով»։ Չէ՛, կարեւորութիւն
պէտք չէ տալ բնաւ այնպիսի անամէջ բա-
ցատութիւններու, որոնցմով իբր թէ ա՛լ
անպէտ բան մը դարձեր է եղեր կրօնքը և
մեր փառաւոր Աւետարանը։ Մեր կրօնքին
ճշմարտութիւնները կան և կը մնան անսա-
սան իրենց յաւերժական փառքով, և ա-
նոնք պիտի վառին ճառագայթալիր, երբ
արեւը ու աստղերը ա՛լ չիջած ու անհե-
տացած ըլլան երկինքներու մէջ։ Ո՛չ, մենք
չենք կրնար երբէք ջնջիլ զանոնք մեր հո-
գիէն ուր Աստուծոյ մատով քանդակուած
են, չենք կրնար լռեցնել անոնց ձայնը որ
խորունկ և ահեղագոյ կ'որոտայ մեր հոգ-
ւոյն մէջ։ Աւելի դիւրին է լռեցնել երկնից
որոտումները, աւելի դիւրին է երկնից
շանթը ջախջախել մեր ոտքին ներքեւ,
քան խորտակել զանոնք և ջնջիլ մարդ-
կութեան սրտին մէջէն։

Ոմանք կրօնական-բարոյական թերթե-
րով չեն շահագորգրուիր, առարկելով թէ
վերացականութեամբ զբաղող են անոնք,
ու այս գործնական դարուն մէջ՝ ինչպէս է
մերինը՝ մեծ օգտակարութիւն մը չեն կրը-
նար ունենալ։ Բայց վերացական ո՞ր ճշ-
մարտութիւններն են որ սերտ յարաբերու-
թիւն չունին ամէնէն գործնական սեպուած
իրերու հետ։ Մաթեմատիքական ամէնէն
աւելի հայեցողական սեպուած ճշմարտու-
թիւններէն չէ՞ որ ամէնէն գործնական ար-
դիւնքները քաղուած են։ Երկրաչափական,
ֆիզիքական ու աստղաբաշխական հայեցո-
ղութիւնները չեն որ շատ անգամ ամենէն
մեծ օրհնութիւնները բերած են գործնա-
կան կեանքին վրայ։

Մնայ որ կրօնական-բարոյական թերթ
ըսելով չենք հասկնար զուտ հայեցողական
վարդապետութիւններով զբաղող թերթեր։
Անոնք ամենէն աւելի պիտի զբաղին մարդ-
կային կեանքով որ կարծեմ թէ ամենէն
գործնական բանն է, և կրօնքը, արդէն,
Քրիստոսի սորվեցուցած կրօնքը, աւելի՛ և
ամենէն առաջ այս մեր կեանքին կը վերա-
բերի, ամէն բանէ աւելի կեանքով կը զբաղի
ան, ու անոր վրայ փառքի ծիրանի մը կը
տարածէ։ Արդարեւ ի՞նչ պիտի ըլլար մեր
կեանքը, եթէ կարելի ըլլար մեզ վերցնել
անոր մէջէն բոլորովին կրօնքին ազդեցու-
թիւնը։ Ի՞նչպիսի աւերակի մը պիտի փոխար-
կէինք զայն, ի՞նչ ահարկու պարագութիւն
մը պիտի ըլլար բոլոր կեանքը։ Ծշմարիտ
կրօնական թերթ, մը որ պիտի զբաղի
կեանքի իրականութիւններով և ջանալով
ցոյց տալ կրօնի ճշմարտութեանց կիրար-
կումը անոնց մէջ, շատ հաւատարիմ ու
օգտակար մեկնիչ մը պիտի ըլլայ թէ՛
կեանքի և թէ՛ Ս. Գիրքի. ան պիտի ցոյց
տայ թէ կրօնը ու անոր ազդեցութիւնը ո՞ր
ուստիճան կարեւոր են կեանքի ամէն խա-
ւերու ու վիճակներու մէջ, պիտի հաւ-
ստատէ թէ Քրիստոսի կրօնը արեւին պէս է
որ իր փառքը կը ցոլացնէ հաւասարապէս
թէ՛ պալատին վրայ և թէ խրճիթին մէջ.
Իր չքեղութեամբ պիտի վառի հաւասարա-
պէս թէ՛ վեհապետի մը խորհրդակցութեան
դահլիճին և թէ չինականին խոհանոցին
մէջ. ինչպէս համայնատարած լոյսը կը լեցնէ
երկնից անհուն գմբէթը և ծաղիկին դուզ-
նաքեայ բաժակը, նոյնպէս ալ Քրիստոսի
կրօնին ազդեցութիւնը պիտի լուսաւորէ
մեր յոյսերուն երկինքը ու մեր հոգիներուն
և անձկութեանց երկիրը, և ոտք մէջ է
որ գլխաւոր դեր մը պիտի կատարէ կրօ-
նական թերթը։

Եւ մեր բազմաչարչար ու խոշտան-
գուած ազգը, մասնաւորաբար, պէտք ունի
անոր որ յարաժամ օրը օրին քարոզին հէզ
հայութեան, թէ վերջապէս ո՛ւրիշ կուգայ
իր ճշմարիտ սղատութիւնը և թէ ի՞նչպիսի
ազդեցութիւններէ, ի՞նչպիսի լոյսէ է որ
պէտք է առաջնորդուի իր ամենէն անբս-
տոյգ և վտանգալից օրերուն մէջ։

Մեծահոգակ երկրախոյզ Բէրի, որ վերջերս աշխարհի ուշադրութիւնը գրաւեց Բուքի հետ ունեցած իր մրցակցութեամբ, կը պատմէ թէ իր բեւեռի խուզարկութեանց մէջ պատահեցաւ անգամ մը որ երբ բալխիրով կը ճամբորդէր դէպի բեւեռ, ինք կարծեց թէ իր բալխիրով օրը տասը մղոն յառաջ կ'երթայ դէպի հիւսիս. սակայն քիչ վերջը գտաւ որ այն սառնարանը որուն վրայէն ինք կ'երթար բալխիրով, ամբողջութեամբ դէպի հարաւ վար կը սահէր օրը տասներկու մղոն, անանկ որ հասկցաւ հէգ խուզարկուն թէ փոխանակ ամէն օր տասը մղոն յառաջ երթալու, օրը երկու մղոն ետ կ'երթար իրօք: Եւ գիտէ՞ք մեծ երկրախոյզը ի՞նչ միջոցով կրցաւ իր սխալը ուղղել ու հասկնալ իր ճշգրիտ վիճակը: Ոչ թէ իր շուրջի առարկաներէն, քանզի անոնք զինքը կը խաբէին ահա: Ան վեր վերցուց իր աչքերը երկինքներուն և աստղերուն, որոնք հաւատարմաբար յայտնեցին իրեն թէ իրապէս յառաջ չէր երթար, այլ ետ: Ո՛հ, իցիւ թէ մեր սիրելի ազգն ալ, այն սառնապատ ամայութեանց մէջ ուր կը գտնուի, վեր դարձնէր իր տրտմաթաթաւ աչքերը, ու հոն արեւէն ու աստղերէն անդին, ու անոնցմէ վեր գլուխէր, իբր ճշմարիտ առաջնորդ, այն անհուն և յաւիտենական Աստուածը, որուն ոսկեփողփող ճաճանչները կը լեցնեն բոլոր տիեզերքները: Թող ուրեմն բոլոր թերթերը և բոլոր բեմերը աշխարհաթունդ սրտուններու նման բոլոր ազգին ու բոլոր երկրին մէջ հնչեցնեն մեր մեծ Աստուծոյն, մեր մեծ Ազատարարին, Տէր Յիսուսի լուսայեղձ ճշմարտութիւնները, ու թող աշխարհ ծունկի վրայ մտիկ ընէ անոնց:

ՅԱԿՈԲՈՍ Հ. ՃԵՃԻՋԵԱՆ

“ՏԱՃԱՐ,, ԻՆ ՇՈՒՐՁԸ

Տաճարի ներկայ Դրդ թիւը, պզտիկ յապաղումով մը, այսօր Մարտ 1ին կը հրատարակուի. բայց աւելորդ է ըսել թէ բաժանորդները տուեկիք բան մը չունին,

քանի որ բաժանորդագրութիւնը թիւի վրայ է: Այս յապաղումն յառաջ եկած է կրօնաթերթիս վարչական և խմբագրական գործերուն Տ. Զարմայր քահանայի յանձնուելուն, և վարչական ու տպարանական կարգադրութեանց հետեւանօք:

Փութանք յայտնել որ կրօնաթերթիս շարունակութիւնն ապահովուած է գաւառէն թէ Պոլսէն եղած Զեմ ընդունելութեան շնորհիւ: Կը մնայ այդ համակրութեան հնչուն ձեւ մը տալ, անյապաղ վըճարելով բաժնեգները:

* Պոլսոյ Պատ. բաժանորդաց մեծ մասը ներկայ է. թիւին հետ կ'ստանան նաև Զ. թիւը, որ կարող ցրուիչի մը չգոյութեան պատճառով չէր ցրուուած ամբողջապէս: Այդ թերին լրացած է այսօր, հետեւապէս կը խնդրուի որ պակաս թիւ ստացողները ցրուիչին յայտնեն չստացուած թիւերը, ամբողջացնելու համար իրենց հաւաքածոն:

* Ուշադրութիւն «Տաճար»ի նոր հասցեներուն:


ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ (՝)

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ.—Գրեց Մուշեղ եպիսկոպոս: Արմաշական արքայազան իրեն յատուկ ջղուտ ոճով կը քննէ ընկերավարական սկզբունքներու դերն Հայերու մէջ, և նշանաւոր ընկերաբան-հոգեբաններէ մէջ բերուած ճոխ և համոզիչ վկայութիւններով կը հաստատէ թէ այդ դերը նպաստաւոր չափով կրնայ ըլլալ: Տպուած Գահիրէ: Գին 0,75 ամսագիր:

ՍՏՐԿՈՐԴԻ, ԱԶՍՏՈՐԴԻ, ՀԱՅՈՐԴԻ.—Գրեց Գարեգին վրդ. Սաչատուրեան: Երիտասարդ Արմաշականը՝ տրամախօսութեան ձեւով հոգեբանական յաջող պատկեր մը գծած է հայ ժողովուրդի իրական կեանքէն, նպատակ ունենալով, «Արթնութեան ոգին — յեղափոխութեան գաղափարը—վերարծարծել ստրկութենէ նոր ազատած, բայց ստրկական սովորամոլութիւններով խմորուած ու թրծուած ժողովուրդներու մէջ»: Գին 2 ղշ.:

(*) Պատ. հեղինակներն եւ հրատարակիչներն երբ կ'ուզեն իրենց գործերը ծանուցուած օրերէն Տաճարին մէջ, պիտի խմբագրութեան դրկեն երկերու օրինակ այդ գործերէն, որոնց վրայ ի հարկին պիտի խօսուի մասնաւոր գրախօսականով:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ



Ս. Պատրիարք Հօր վերադարձը.— Զօրակոյն
եւ մեր իրարանցումը,— «Մեհասաներորդ
Ժամուն».— Բեքիֆ թե նորագիր գիւ-
նուր.— Հարցապնդումի մը պեքիւր.
— «Վարդանանց» հանդիսը.— Հայ
Շիրի մը պեքիւր:

Ամեն. Ս. Պատրիարք Հօր վերադարձն
իր աթոռը, Հայ ազգին և ընդհանուր օս-
մանցիութեան կողմէ ջերմ գոհունակու-
թեամբ ողջունուեցաւ:

Հայ ազգն իր սրտին ալքերուն մէջ
ծածկուող խուլ բողոքի արտայայտութեանց
մարմնացումը նկատած էր Ն. Սրբազնու-
թեան հրաժարումն այդ փշալից աթոռէն,
և ինք ալ միահամուռ հաւանութիւնը ցու-
ցուցած էր այդ խաղաղ բայց ազգու բո-
ղոքին: Բայց Հայուն արդար պահանջում-
ներուն մասնակի, աննշան գոհացում մը
միայն տրուեցաւ Ն. Սրբազնութեան մե-
կուսացման միջոցին, և Ատանայի ահաւոր
եղեռնին դրդիչներու պատասխանատունները
պատժելու, և այս կերպով նոյն ինքն օս-
մանցիութեան արդարաւարութեան համ-
բաւը փրկելու գործը խոստումի սահմանին
մէջ մնաց:

Թոյլ, անստոյգ, տարտամ կացութեան
մէջ էին ազգային բոլոր գործերը, որոնց մէջ
ստիպողաբար անմիջական լուծման կարօտ
հարցեր պակաս չէին: Բայց բանակցութիւն-
ները,— ազգային չըջանակի մէջ թէ պե-
տական պաշտօնատուներու հետ,— կը
ձգձգուէին շարունակ, ու շարունակ կը
դառնային երկու խնդիրներու շուրջ մի-
այն.— Ս. Պատրիարք Հօր հրաժարականը,
և Երուսաղէմի կնճառոտ հանգոյցը: Ուրիշ
ամէն բան բարձի թողի եղեր էր Ազգ. Վար-
չութեան կողմէ, և արդէն կառավարութիւնն
ալ՝ համաձայն Ազգային Սահմանադրու-
թեան տրամադրութեան, Ն. Սրբազնու-
թիւնը միայն կ'ուզէր ճանչնալ Հայ ազգին
և Օսմ. պետութեան յարաբերութեանց
միջնորդ: (Ազգարարութիւն մը կրնար նը-
կատուիլ այս կարգ մը տաք գլուխ ազգա-

սէրներու, որ Պատրիարքական իշխանու-
թեան ազդեցութիւնը չէզոքացնելու համար
բան մը պակաս չթողուցին): Հետեւապէս
ժողովուրդը լայն շունչ մ'առաւ Ն. Սրբ-
ազնութիւնը վերադարձած տեսնելով
ազգային գործերու գլուխը: Եւ իրօք,
այս վերադարձէն ետքը, Ն. Սրբազնու-
թեան առ նախարարս, և փոխադարձա-
բար, տուած այցելութիւնները, և փո-
խանակուած սիրալիր խօսքերն ու խոս-
տումները յոյսեր ծնուցին կամ արդէն
գտնուած տարտամ յոյսերն արծար-
ծեցին:

Եթէ մէկ կողմէ կը պնդուի—և իրա-
ւամբ—մեծ ոճրագործներուն մեծ և օրի-
նակելի պատիժ մը տալու պահանջումին
վրայ, միւս կողմէ Ազգ. Պատկ. Վարչու-
թեան և իր Ս. Նախագահին կողմէ մեծ
հոգածութիւն ցոյց կը տրուի Հայ ժողո-
վուրդին ցաւերը ցուցադրելու առ որ անկ
է և ատոնց դարման խնդրելու, որբերու
և այրիներու տառապագին վիճակը պար-
զելու և ատոնց անհրաժեշտ օգնութիւնը
պահանջելու պետութենէն, գրաւուած հո-
ղերու խնդիրը ներկայացնելու, և զանոնք
իրենց այժմ վերադարձող տէրերուն յանձ-
նելու ստիպողական հարկն ի վեր հանելու,
ևն. ևն.: Ամեն. Տ. Եղիշէ Սրբազան Դուռ-
եան չի յոգնիր ամէն առթիւ դիմելէ պե-
տական պաշտօնատուները, և յուսալից
կը վերադառնայ, թէ և յոյսերը յոյս կը
մնան ընդհանրապէս, և խօսքէն գործի
գալու ժամանակն հասած չի թուիր:

* * * Ամէն դիմում հաւասարապէս անօ-
գուտ չի մնար սակայն: Յիշատակելի է
Ս. Պատրիարք Հօր առ պատերազմական
նախարարն ըրած դիմումին վրայ տրուած
մէկ ամիս պայմանաժամը՝ տարիքի սրբազ-
րութիւն և մոռնի վերաբերեալ խնդրանք-
ներու քննութեան և կարգադրութեան
համար: Շնորհակալութեան արժանի է
Վսեմ. Շէվքէթ փաշա՝ ըրած այս թոյլ-
տուութեան համար, որով իրապէս օրինա-
կան առարկութիւններ ունեցողներ ժամա-
նակ պիտի գտնեն այդ առարկութիւնները
ներկայացնելու: Եւ սակայն, դատապար-
տելի անհոգութիւնը, զոր Տաճարի նա-

խորդ թիւին մէջ մասնաւոր գրութեան մը նիւթ ըրեր էինք, եթէ մեր ազգային նըկարագրին տխուր մէկ կողմը չնեղակայուցնէր, կարելի է ըսել որ այդ խնդրանքն ընելու հարկին տակ չպիտի գտնուէինք: Մի՛շտ մեհաւանեւորդ ժամուն. այս է մեր սովորութիւնը: Հազարումէկ յորդորներ՝ գիտակից և խղճամիտ անձերու կողմէ՝ որ ժողովուրդը ճանչնայ իր օրինական պարտքն և իրաւունքը, բնա՛ւ ականջը չեն մտներ նոյն իսկ անոնց որ ամէնէն աւելի պէտք է շահագրգռուէին: Զինուորական խնդրոյն մէջ ևս նոյնը պատահեցաւ: Կրկին և կրկին ծանուցումներ անօգուտ եղան թօթափել տալու ենթականերու անգամ ոտնոգութիւնը: Հինգ վեց ամիսէ ի վեր սկսած էին զինուորագրութեան քննութիւնները, և շատ սակաւաթիւ մարդիկ կրցան իրենց օրինական իրաւունքներն արժեցնել. և հիմա, միտասաներորդ ժամուն, երբ զօրակոչն եղած է արդէն և շատեր դրօշի տակ կը գտնուին, մայրեր ու հայրեր, կիներ ու քոյրեր իրար անցած են իրենց սիրելիները «իրկելու»: Ռէր էին մինչեւ հիմա, իրենց օրինական արդար պահանջումներն ինչո՞ւ չըրին: Անշուշտ, եթէ ականաց սխալումներ եղած են, ուշ կանուխ կ'ուղղուին. բայց հիմա որ Զինուորագրական Յանձնաժողովները յրուած են և Խտաբէի ժողովները պիտի կատարեն սրագրութիւնները, դժբախտաբար աւելի դժուարին պիտի ըլլայ իրենց գործը, երբ մանաւանդ հայ ներկայացուցիչներն ալ իրենց բացակայութեամբ փայլին այնտեղ, ինչպէս Զին. յանձնաժողովներու շատերուն մէջ, ճիշդ հուկապատկերն ըլլալով Յոյներուն և Հրեաներուն, որ անխափան ներկայ կը դանուէին նիստերուն, երկուքի տեղ չորս վեց անձեր գտնուելով միշտ:

Սակայն պէտք է խոստովանիլ որ ժողովուրդը մասամբ արդարացում մ'ունի իր անտարբերութեան: Ան անգէտ էր զինուորական օրէնքի արամադրութեանց, գուցէ չէր ըմբռներ գործին կարեւորութիւնը, պէտք էր սորվեցնել, բացատրել անոր: Եւ ասոր մէջ թերացան ընդհանրապէս Պատրիարքարանն և թաղային աղ-

գային մարմինները: Պէտք էր Հայոց Պատրիարքարանն ալ մատուցանէր իր դիտողագրերը: Յաւալի է որ այս խնդիրն ալ մէջտեղ ելաւ ճիշտ այնպիսի ժամանակ մը, երբ մենք Պատրիարքական հրաժարագրով և Երուսաղէմով միայն կը զբաղէինք: Թեւ լաղրութիւններ ալ պակաս չեղան Խառն ժողովին: Այս տողերը դրոշմ ամիսներ առաջ մասնաւոր գրութեամբ մը Ազգ. Վարչութեան պարզեց տարիքի սրբագրութեան և ծննդեան վկայագրերու, 15 տարեկան սղոց մոլիս նկատուելուն, գաւառացի հօրմէ մօրմէ բայց Կ. Պոլիս ծնած տղաքներու գաւառացի արձանագրուելուն, զինուորագրուող երիտասարդի մը ցոյնվայր ունեցած պէտքաբար աւիւրիտի տուրքը զանձուելուն ևն. աւթիւ ծագած խնդիրները, բայց չգիտենք թէ ինչպիսի առնուեցան ժամանակին: Ծշմարտութիւնն այն է որ Ազգ. Վարչութիւնը հիմա՛ կը շտրփի, երբ պառաւ մայրեր, ծաղկատի կիներ Պատրիարքարանի դռուն ափ առած են, իրենց միակ ապաւենը, իրենց սիրելիները պահանջելու, առանց որոց անօթի պիտի մեռնին:

Միւս կողմէ, սակայն, խնդիր է գիտնալ թէ պատերազմական պաշտօնատունն օրինական ինչ հիման վրայ քսանըջորտէն քսանըվեց տարեկան երիտասարդներն եռամեայ գործն ծառայութեան կը կոչէ: Ըստ օրինի ռէսիւթէն անոնք կամ ինքիցաք. և ինչպէս քանի՞ քանի՞ անգամ հրատաւրակուեցաւ թերթերու մէջ, միամեայ կամ եռամեայ, կամ առ առաջին վեցամեայ ծառայութենէ ետքը պիտի կրնային անոնք դառնալ իրենց զործին գլուխը: Ասկէ զատ, քանակին մէջ եկեղեցականներ զբաւուելու պահանջումն ո՞ւր մնաց: Ինչպէս պիտի մատակարարուին Հայ զինուորին հոգեւոր պէտքերը, եկեղեցի չգտնուած դաշտերու մէջ: Կարեւոր հարցեր են ասոնք, և Պատրիարքարանն իրաւունք և պարտք ունի գոհացում ստանալու այս կէտերուն նկատմամբ, որոնց վրայ Օսմ. Խորհրդարանի մէջ ևս կարելի և բանաւոր է հարցապնդուում ուղղուիլ:

Եւ սակայն, ինչ ալ ըլլայ, զինուորական

ծառայութիւնը պարտք մըն է Հայրենիքի ամէն զաւակներուն համար անխախտը: Ինչպէս ամէն պարտականութիւն՝ իր դժուարութիւններն ու ծանր պատասխանատուութիւնն ունի, բայց ունի նաեւ նիւթական ու բարոյական մեծ փառք ու վարձատրութիւն: Իրաւ է որ զինուորը վարդէ անկողինի վրայ չի պառկիր, և սակայն իր դժուարին կեանքի պայմանները զօրեղ նկարագիր մը, տոկուն կամք մը, չարքաշութիւն և մանաւանդ կարգապահութեան ոգի մը կը պարզեցնեն ենթակային, հայրենիքի պաշտպանութեան դիւցազն արուեստներն ըլլալու անփոխարինելի փառքին հետ մէկտեղ:

Հայ ծնողներ, հայրեր ու մայրեր, պատճառ չունիք լալու ողբալու. զաւակներնէդ առժամաբար բաժնուելու ցաւը գինեմ թէ կը կոտաւցնէ ձեր ծնողական սիրտը. բայց մի մոռնաք որ ուշ կանուխ կը հնչէ փառաւոր վերադարձի երջանիկ ժամը. մի՛ մոռնաք որ ճշմարիտ ազատութիւնը՝ պարտքի և իրաւունքի բացարձակ հաւասարութեամբ միայն կ'ստացուի, և ձեր հիմակուան զոհողութիւնն է որ այդ բացարձակ հաւասարութիւնը կ'ընծայէ ձեզի՝ օսմանցի լուր որ հայրենակիցներու մէջ տեղ:

* * * Ս. Վարդանանց տօնը հանդիսաւորութեամբ տօնուեցաւ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ, և վարժարաններու մէջ եւս հանդէսներ սարքուեցան այդ անձուէք հերոսներու յիշատակին: Ճառեր, երգեր ու արամախօսութիւններ արտասանուեցան երկսեւ աշակերտներու կողմէ: Իբր գերազանցօրէն խօսքի մարդիկ, բան մը պակաս չթողուցինք փառաբանելու համար յիշատակն երանելի դիւցազններուն: Հոգեկան անուշ գոհունակութեամբ մը մեկնեցաւ ամէն ոք այդ կրօնական և ազգային հանդէսներէն, մըտածելով որ աստուծոյ վրայ խօսիլը, խորհիլն անդամ քրէական յանցանք էր երեսնամեայ բռնակալութեան անհանդուրժելի ռեժիմին տակ: Բայց կը վախճանք թէ ուր պատրուելու վայրկեանական եղած է, առանց խորունկ հետք մը ձգելու ներկանիւ-

րուն վրայ: Բանախօսութիւններն և արտասանութիւնները, ընդհանրապէս հապճեպով պատրաստուած միջակութիւններ, անտարբեր թողուցին գրէթէ բոլոր ներկայ գտնուողները, որ արդէն հետաքրքրութեան համար եկած էին մեծ մասամբ: Ս. Պատրիարքը շատ իրաւամբ դիտել տուաւ Մայր եկեղեցւոյ մէջ խօսած քարոզով, թէ բան մը փոխուած չէ քառասուն տարի առաջուան հանդէսներէն, ինչպէս յառաջդիմական ու է փոփոխութիւն չէ եղած մեր ազգային ամենօրեայ կեանքին մէջ: Փափաքելի էր որ աւելի աշխատուած և հիմնական ծրագրի մը վրայ պատրաստուած հանդէսներ սարքուէին, որովհետեւ պէտք է դատարարակող դերմ'ունենան ժողովրդեան մէջ: Առանց ասոր ոչինչ կ'արժեն:

Նոյն աւելի իրաւամբ կարելի է ըսել շարժուա ներկայացուած թատերախաղերուն վրայ: Թատրոնը իբրեւ կեանքի իրական, ցայտուն պատկեր մը, շատ աւելի հզօր ներգործութիւն մը ունի կատարելիք, պայմանաւ որ հանճարի ներշնչումներ ըլլան ներկայացուած գործերը: «Բաջն» կամ «Մեծն Վարդան Մամիկոնեան» անունով պատրաստուած հին ու նոր թատերախաղերը՝ նիւթին վեմութիւնէն, նուիրականութիւնէն ուրիշ ոչինչ ունեցած են զնահատելի, և կը վախճանք որ անոնք աւելի՛ ստուերած ձգեն եզրիէի հոյակապ, բանաստեղծական պատմութեան վրայ, քան թէ աւելի ցայտեցնեն նոյն անուան հեղինակին նկարագրած մեծագործութիւնները: Հայ Շիրիլի մը պէտք կայ, հերոսական այն անմահ գործէն երեսն բերելու համար գրական հրաշակերտ մը, թատերախաղ մը, որ սերունդէ սերունդ փոխանցուի՝ հիացման առարկայ ըլլալով միշտ:

ՆԻԻԹԵՐՈՒ ԱՌԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՒՎ յաջորդ թիւին թողուլ հարկադրուած ենք Տ. Ղեւնդ Մ. Վ. Դուրեանի «Ս. Գրոց բնապատմութիւնը» և Տ. Արիստակէս քհ. Հիսարլեանի «Պատմութիւն Հայ Զայնագրութեան» յօդուածներուն շարունակութիւնը: Նոյն թիւին մնաց նաեւ ծանօթ հրապարակագիր Արշակ էֆ. Ալպոյաճեանի՝ յատկապէս Տաճարի համար գրի առած ուշագրաւ մէկ յօդուածը, «ԴՐԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, - ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻ»: Տիար Ալպոյաճեան խոստացած է իր լուրջ աշխատակցութիւնն ընծայել կրօնաթերթին:

ՄԱՄԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳ

Տաճար իր ամէն թիւին մէջ այս խորագրին տակ ամփոփումներ պիտի տայ օրաթերթերու և Հանդէսներու մէջ Հայ կրօնքին և Հայ կեանքին հետ առնչութիւն ունեցող հեղինակաւոր միտքերու կողմէ յայտնուած կարծիքներուն: Ներթերու առատութիւնը արգելք կ'ըլլայ մեզ այս թիւէն իոկ գործադրելու մեր մըտադրութիւնը:

Անցողակի յիշենք միայն Դանան Եկեղեցացիի աշագրաւ յօտուածներու շարքը՝ «Արեւելեան Եկեղեցիներ»՝ Բիզանդիոնի մէջ, հմտալից և ճոխ տեղեկութիւններով ու ժողովրդեան դիւրամատչելի պարզ և յստակ ոճով մը խմբագրուած: Փափաքելի է որ ժողովրդեան իրական օգուտը միայն վնասող յարգելի աշխատակիցները Տաճարին, նոյն յստակ ոճին հետամուտ ըլլան իրենց դրութիւններուն մէջ:

Վերոյիշեալ թերթին նախորդ շաբթուան մէկ թիւով Հօրոյ «Համազգի հասարակութեանց հետ մերձեցում մը» յառաջ բերելու անհրաժեշտութիւնը ի վեր հանելով, կ'առաջարկէ՝ ի սէր ազգային համերաշխութեան՝ «Քաղկեդոնի ժողովին և Լեւոնի տօմարին դէմ եղած անէժքն և այս վերջնոյն «պիղծ» մակդիրը միանգամ ընդ միշտ վերցնել մեր Եկեղեցւոյ արարողութեանց մէջէն»: Ասիկա՝ մօտենալու համար Հայ-հռոմէական ազգայնոց: Գալով Բողոքական ազգայնոց, Հօրոյ կը կը փափաքի որ Հայ-եկեղեցին՝ Դրոշմի Ս. Խորհուրդը չընդունած մեր Բողոքական եղբայրներն ի հարկին չպարտաւորէ այդ Խորհուրդն ընդունելու, ինչպէս՝ օրինակի կամար՝ «մանկամարդ օրիորդ մը, հայ երիտասարդի մը հետ ամուսնութեան պարագային, ինչ որ իր անպատեհութիւններն ունի, և մտադրեալ ամուսնութիւններն ետ կը մնան»: Անշուշտ կարելի չէ համամիտ գտնուիլ եկեղեցասէր և ժողովրդական գրողին առաջարկներուն. բայց հարցն ուշագրաւ է, և կ'արժէ որ մտածուի մեր Հայ-հռոմէական և Հայ-բողոքական եղբարց հետ աւելի սերտ միութիւն մը յառաջ բերելու պէտքին վրայ:

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

Կ Ա Մ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ Ը

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն Զ. քիւհն)

ԱՐՏԱՇԷՍ. — Ես երբէք չեմ կրնար ըմբռնել, Սրբազան Տէր, թէ նախարարները իրապէս իմ բարոյական կեանքէս զայլթակղած ըլլան, այսպիսի աններելի ոճրագործութիւն մը ծրագրելու համար: Իմ թերութիւններս արքայական թագին տակ տեսան. ես այն Արտաշէսը չեմ որ տասնըութ տարին իրենց աչքին առջեւ ապրեցայ: Ամբաստանուածը թագն է և ո՛չ թէ թագակալը:

ՎԱՐԴԱՆ. — Թագը պաշտպանողը, Տէր արքայ, անոր տէրն է: Ես գիտեմ թէ բարոյականի թերութիւնը, կեղծ նախանձախնդրութիւնով քննադատուած, բարուրանք մ'է տապալելու համար թագը. բայց պարտականութիւն է տեղի չիտալ այդպիսի ամբաստանութիւններու: Այսօր ձեր անձին հետ կապուած է ճակատագիրը ամբողջ աշխարհի մը՝ որ ամէն կողմէ թշնամիներով շրջապատուած է, որուն կեանքը արիւնով գծուած է, և որուն ներքին ոյժը յաճախ ջլատուած է, շնորհիւ այն բաժանաբաժան իշխանութիւններուն՝ որոնք նախարարական անունին տակ զիրար կը բզրկտէին ու կը յօշոտէին, երբ զիրենք սերտ միութեան մը մէջ պահող ճարտար գօրութիւնը կը պակսէր: Այդ նախարարութիւնները այսօր ալ, Տէր Արքայ, կը ձեւացնեն առանձին առանձին ոյժեր: Հայոց թագաւորի հեղինակութիւնն ու գօրութիւնը՝ այդ ոյժերուն համակրութիւնով և համերաշխութիւնով պալատին շուրջ բոլորուելուն մէջ է՝ միասիրտ և միախոր-

հուրդ: Տէր արքայ, Դուք կրցա՞ծ էք նախ այդ համակրութիւնը շահիլ:

ԱՐՏԱՇԷՍ. — Եւ ի՞նչպէս, սպարապետ, իբրեւ թէ չէ՞ք ճանչնար նախարարները:

ՎԱՐԴԱՆ. — Լաւ կը ճանչնամ, և կը պնդեմ թէ Ձեր առաջին գործը պիտի ըլլար զանոնք սիրաշահիլ: Յիշեցէք Ձեր հօր բռնած ընթացքը. ի՞նչ կը կարծէք, նախարարները նոյն չէին այն ատեն, ինչ որ են այսօր: Տիգրանի տրամադրութիւնները նոյնը չէին այն ատեն ինչ որ են այսօր. բայց... ներեցէ՛ք, Տէր Արքայ, ախր ահա կալը նոյնը չէր՝ ինչ որ է այսօր: Անոր խառնական քաղաքականութիւնը չորս անմուռանալի մեծագործութիւններու մէջ կ'ամփոփուի. — Տիգրանի վստահութեան արժանանալ, — Բիւզանդիոնի համակրութիւնը շահիլ, — նախարարներուն պատկառելի հոնդիսանալ՝ հայրապետին սէրն ալ գրաւելով, — և խաղաղ ժամանակամիջոց մը ստեղծելով գրականապէս ծաղկեցնել Հայաստանը: Ձեր հօրեղբայրն ալ՝ թէ և կարճ՝ սակայն նոյն քաղաքականութիւնը շարունակեց:

ԱՐՏԱՇԷՍ. — Իսկ անկէ՞ վերջ:

ՎԱՐԴԱՆ. — Իսկ անկէ վերջ Ձեր անհափառութիւնը խանգարեց իրերու ներդաշնակ գնացքը:

ԱՐՏԱՇԷՍ. — Անկեղծօրէն համոզուած էք թէ միայն ու միայն այս է պատճառը, և նախընթաց խանգարումի մը արդիւնք չէ այսօրուան այս անկերպարան և սպառնալից վիճակը:

ՎԱՐԴԱՆ. — Ըսի արդէն թէ նախարարներուն և Տիգրանի հեռապատկերներն ու ծրագիրները նոյնն էին այն ատեն՝ ինչ որ են այսօր: Բայց եթէ Ձեր հայրը իր ամբողջ գիծերովը վերապէր այսօր իր որդիին մէջ՝ ես կը կարծեմ թէ իրերը բոլորովին տարբեր վախճանի մը կրնային յանգիլ:

ՍՍ.ՀԱԿ. — Սիրելիս, արքայ Արտաշէս, Դուք կը յիշէք անշուշտ թէ ո՞րքան խանգավառութիւնով ընդունեցին զՁեզ նախարար և ժողովուրդ՝ երբ Դուք առաջին անգամ Ձեր հօրը գահը կը բազմէիք: Թէ իսկ կեղծ ըլլային առաջիններուն տաք վերաբերումները Ձեր նկատմամբ՝ կրնայիք

զանոնք անփոփոխ պահել ու մշակել շարունակ, Ձեր անձը ամէն կերպով սիրելի ընծայելով անոնց: Դիտե՛մ, Ձեր երիտասարդական արիւնն ու աւիւնը չէին կրնար պահել Ձեր գործերուն և ընթացքին հաւասարակշռութիւնը: Բայց Ձեր մօտ չէին պակսեր անկեղծ խնամակալներ՝ որոնք իրենց փորձառութիւնովը, ժողովրդականութիւնովը ու հեղինակութիւնովը կրնային միշտ բարձր բռնել Ձեր գիրքը և անաղարտ պահել Հայոց աշխարհի փառքը:

Կը տեսնէ՞ք այս պատուական ասպետը (Սմբատը մասնացոյց ընկրով), Հայոց ծերունի առիւծը: Նա Ձեզմէ զատ հօթը թագաւորներու հետ ապրեցաւ, զանազան քաղաքականութիւններու սկանաւտես և հմուտ եղաւ. բայց Դուք չկրցաք կամ չուզեցիք օգտուիլ անոր իմաստուն և ազգօգուտ թելադրութիւններէն, գերին դառնալով Ձեր երիտասարդի կարգ մը յոռի յօժարութիւններուն: Կը տեսնէ՞ք, արքայդ Հայոց, բարոյականի ամբաստանութիւնը մինչեւ ո՛ւր կը տանի դեռ զՁեզ: ԵՂԻՇԷ. — Պատկառելի առիւծին քովն է նաև քաջ կորիւնը՝ ազնիւ Մամիկոնը, մինքան նախանձախնդիր Արշակունի թագին և անկեղծ մտերիմ երիտասարդ թագաւորին: Սմբատ և Վարդան «սիրելի, գեղեցիկ և վայելուչ, առիւծներէն աւելի թեթեւագոյն՝ առիւծներէն աւելի զօրացան»: Բայց ի՞նչպէս մոռնալ առիւծներու գլուխ՝ Հայոց մեծ ու սրատես Արծիւը, ամենուս սիրելի հայրը՝ Ձեր Սրբութիւնը, որ ո՛չ մէկ ջանք չինայեց Վառնապուհի վտանգուած գահին վրայ բարձրացնելու ու նոր հարազատ որդին:

ԱՐՏԱՇԷՍ. — Այո՛, վտանգուած գահի մը վրայ... բայց ի՞նչ զարմանք որ անոր վտանգուելը ինձ կը վերագրուի:

ՎԱՐԴԱՆ. — Ո՛չ, Տէր արքայ, Դուք չվտանգեցիք, բայց չըրիք ինչ որ պէտք էր ազատելու համար զայն վտանգէն:

ԱՐՏԱՇԷՍ. — Սպարապետ, հիւանդութիւն մը իր սկզբնաւորումին մէջ դիւրին է դարմանել, բայց երբ սն կը յառաջանայ՝ ա՛լ յաճախ անօգուտ են դեղ ու դարման. բժիշկը պատասխանատու չէ և ո՛չ ալ յանցաւոր:

ՎԱՐԴԱՆ. — Բայց անձնուէր բժիշկ մը յուսահատիլ չգիտեր. կ'աշխատի մինչեւ դադրի սրտին բարախումը: Թող որ հիււանդութեան զգալի յառաջացում չիկայ, այլ... Օհ, Տէր Արքայ, ներեցէք որ զՁեզ սիրով սիրտի մը թելադրութիւնով չափազանց համարձակ կը խօսիմ: Դուք տակաւին չա՛տ միամիտ էք պնդելու թէ քաղաքականութիւնը իր բնական ընթացքը կը շարունակէ գահավիժարար՝ պատրաստելու համար...

ԱՐՏԱՇԷՍ. — Այո՛, կը պնդեմ, պատրաստելու համար թագաւորութեանս անկումը: Եւ այդ քաղաքականութիւնը դուրսէն չէ՝ այլ ներսէն, այսօր չէ՝ այլ կանուխէն. ոչ մէկերնուդ անձանօթ չէ կարծեմ այն արմատացած ստեղծութիւնը՝ զոր նախարարներն ունին Արշակունիներու տան հանդէպ: Ձէ՛ք յիշի՛ր հօրեղբօրս՝ Խոսրովի ըրածնին: Այն նախարարները՝ որոնք Շապուհէն խնդրած էին Խոսրովի թագաւորութիւնը՝ նոյն նախարարները յետոյ ամբաստանեցին զանի իրրեւ ապստամբ Տիգրանի դէմ և յունամիտ քաղաքականութեան միտող: Ու ես վստահ եմ թէ նոյն ամբաստանութիւնները իմ մասին ալ պիտի ըլլուն. իսկ Տիգրան պատրաստ է լսելու ամէն զրպարտութիւն՝ որ Հայոց թագաւորութեան շուրջը կը դառնայ:

ՍՍՀԱԿ. — Տարակոյս չիկայ թէ այդ յանցանքով պիտի ամբաստանուիք՝ եթէ...

ԱՐՏԱՇԷՍ. — Եթէ... Ի՞նչ կրնամ ընել:

ՎԱՐԴԱՆ. — Ի՞նչ կրնաք ընել. վրձնական ցնցումով մը թօթվիլ անոտարբութիւնը, ամփոփել ցրուած ոյժերը, ստեղծելու համար գէթ զօրաւոր հակազդեցութիւն մը:

ԱՐՏԱՇԷՍ. — Հը՛մ, և գիտէ՛ք թէ ո՛րքան անհնարին բան կը պահանջէք: (Սընքասի դառնալով) Ըսէ՛ք, կ'աղաչեմ, ապիտ, կրցա՞ք հակազդեցութիւն մը յառաջ բերել նախարարներուն դէմ, երբ անոնք Խոսրովը ուղեցին ամբաստանել:

ՍՄԲԱՏ. — Այն ստեղծ պարագաները բոլորովին տարբեր էին: Հայաստանը երկու մասերու բաժնուած էր երկու Արշակունի-

ներու ձեռքը և երկու գերիշխանութիւններու տակ՝ որոնք թէև համաձայնած այս կարգադրութեան վրայ, կասկածոտ աչքով մը կը հսկէին իրենց որսը: Վարչական գործը չափազանց կնճռոտած էր: Շապուհ չէր կրնար վստահիլ Խոսրովի հաւատարմութեան վրայ և կը չափէր՝ խիստ լրտեսութիւնով մը՝ անոր իւրաքանչիւր քայլափոխը: Այսպէս՝ Խոսրովի յարաբերութիւնները Բիւզանդիոնի հետ՝ Արշակի մահէն յետոյ՝ տիրանալու համար նաեւ Արեւմտեան մասին, սխալ մեկնուեցաւ Տիգրանի կողմէ՝ որ պատեհ առիթի մը կ'սպասէր Խոսրովը գահէն զրկելու: Ու ահա այդ առիթը ստեղծեցին նախարարները, որոնք գժտելով Խոսրովի հետ՝ փութացին Շապուհը հաստատել իր կասկածներուն մէջ դաւաճան ամբաստանագիրով մը: Սակայն ամբաստանութիւնը լոկ թագաւորին անձին նկատմամբ էր և ո՛չ թէ թագաւորութեան, քանի որ Ձեր հայրը պատրաստուած էր իրրեւ յաջորդ Խոսրովի: Հակազդեցութիւն մը ստեղծել անհնար էր և անխոհեմութիւն միանգամայն, մանաւանդ որ Վաւիչապուհի բարեմասնութիւնները ամէնուս ալ ծախօթ էին:

Հիմակ սակայն խնդիրը տարբեր է, արքայ Արտաշէս: Ձեր անձով թագը վտանգուած է: Դալով հակազդեցութեան խընդիրին՝ այդ ալ դիւրին գործ չէ: Ներքին ոյժերին քայքայուած է. վասակեանները լուսկան զօրաւոր են, մանաւանդ շնորհիւ այն ամբաստանագրին՝ որ Տիգրանի ջիղերը թունդ կը հանէ: Դուրսէն օգնութիւն սպասել՝ ո՛րչա՛ ալ յիմարութիւն պիտի ըլլար, նկատի առնելով Բիւզանդիոնի վիճակն ու տրամադրութիւնները: Այնքան մեծ է գործուած սխալը՝ ո՛րքան դժուար գայն սրբագրելը:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
(Շարունակելի)

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՀՄԱՅԵԱՆ ԴՀՆՅ. ԷՐԱՆԻՔԱՆԵՂ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅԻ ԴՀՆՅ. ԿԷՋԻՐԻՐԵԱՆ

ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Չագմագճըլար, Յակոբեան խան

„ՏԱՃԱՐ“ Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրուս
Դաւանաց » »	40 »
Արհասահմանի համար տարեկան	10 Ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարաք

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմքեարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Գարեգին Վրդ. Խաչատուրեան
5. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլեան
6. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
7. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
8. Տ. Զարմայր Բնյ. Կէզլուրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալըզեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ծէպէճեան

Տաճարի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտքէ դիմել
 Զարմայր Բահանայ Կէզիւրեանի, Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցին, և կամ
 Պոլիս, Զագմագճըշար, Յակոբեան խան, Օ. Արզուման Տպարան
 ارمنيجه «داجار» غزنهسى اداره خانهسى درسمادنده چاقاچييلر آغويان خان آرزومان مطبعهسى

Rédaction de la Revue «DADJAR»
 Imprimerie O. Arzouman, Stamboul, Agopian Han, Constantinople (Turquie).